ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

*Հայաստանի Հանրապետության*
*փաստաբանների պալատի նախագահի*

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

*2021 թվականին*
*Հայաստանի Հանրապետության*
*փաստաբանների պալատի*
*ռազմավարության ծրագրի կատարման (գործունեության) վերաբերյալ*

*ք. Երևան*

# ՆԱԽԱԲԱՆ

Սույն հաշվետվությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Փաստաբանների պալատ**) 2021 թվականի գործունեությունը՝ Փաստաբանների պալատի խորհրդի 20.12.2017թ. թիվ 26/4-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի 2018-2021 թվականների **ռազմավարության ծրագրի** (**այսուհետ՝ Ռազմավարական ծրագիր**) լույսի ներքո: Այն, ըստ էության, բովանդակում է համապարփակ տեղեկություններ և տվյալներ իրականացված միջառոցումների, դրանց արդյունքների վերաբերյալ՝ ամփոփելով Փաստաբանների պալատի տարեկան գործունեության արդյունքները:

Փաստաբանների պալատի 2018-2021 թվականների ռազմավարության ծրագրով նախատեսված են 2018-2021 թվականների համար Փաստաբանների պալատի ռազմավարական հիմնական 12 ուղղություններ, որոնցով ներկայացված են այն նվազագույն նպատակները, որոնք Փաստաբանների պալատն իր առջև դրել է:

Սույն հաշվետվության մեջ Փաստաբանների պալատի 2021 թվականի ռազմավարական ծրագրի կատարողականը և գործունեությունը ներկայացված է ոլորտային սկզբունքով առանձնացված գլուխներով:

# ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

### *Փաստաբանների պալատի աշխատակազմի աշխատակիցների թվի վերլուծություն.*

2021 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ Փաստաբանների պալատում (այդ թվում՝ հանրային պաշտպանի գրասենյակում) աշխատել է **122 անձ**, որից՝

- ՀՀ փաստաանների պալատի աշխատակազմում՝ 25 աշխատող[1].
- Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատակազմում՝ 17 աշխատող.
- Հանրային պաշտպան՝ Երևան քաղաքում և մարզերում՝ 80 աշխատող (այդ թվում՝ ոչ լրիվ դրույքաչափերով աշխատող հանրային պաշտպանները):




---

[1] ՀՀ փաստաբանների պալատի 25 հաստիքներից 7-ի աշխատավարձի դրույքաչափի 50%-ը վճարվում է պետական բյուջեի մասին համապատասխան օրենքով հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման համար հատկացված գումարից, քանի որ այդ հաստիքների գործառույթներն ուղղված են նաև հանրային պաշտպանի գրասենյակի սպասարկմանը:

### *2021 թվականին գործող փաստաբանների թիվը*

2021 թվականի դեկտեմբերի դրությամբ գործող փաստաբանների թիվը կազմել է **2534 փաստաբան**, որից 1119 կին փաստաբան (44%), իսկ 1415 տղամարդ փաստաբան (56%):




Կասեցված արտոնագրով փաստաբանների թիվը կազմել է 530 փաստաբան:

## ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

### *Ֆինանսատնտեսական գործունեության թափանցիկության ապահովում և հաշվետվողականություն*

Յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար նախապես կազմվում և Փաստաբանների պալատի խորհրդի հաստատմանն է ներկայացվում համապատասխան տարվա տարեկան բյուջեն, որտեղ առանձին հոդվածներով

արտացոլված են տվյալ տարվա համար կանխատեսվող դրամական մուտքերը (եկամուտները) և հնարավոր ծախսային ուղղությունները:

Յուրաքանչյուր տարի Փաստաբանների պալատի նախագահի կողմից Փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանն է ներկայացվում տարեկան բյուջեի կատարողական հաշվետվությունը:

2017 թվականից սկսած Փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանը ներկայացվում է առավել մանրամասն հաշվետվություն, որտեղ արտացոլված են Փաստաբանների պալատի հաշվետու տարվա եկամուտների (մուտքերի) վերլուծությունը, ծախսերի ընդհանուր վերլուծությունը, ինչպես նաև հաշվետու տարվա ծախսերի վերլուծությունն ըստ տարեկան բյուջեով նախատեսված տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

Փաստաբանների պալատի ֆինանսատնտեսական գործունեության թափանցիկությունն ապահովվում է կայքում առկա «Հաշվետվություններ» բաժնում (որը տեսանելի է միայն փաստաբանների համար) Փաստաբանների պալատի ֆինանսական հաշվետվությունները հրապարակելով, ինչը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր փաստաբանի ծանոթանալու Փաստաբանների պալատի ֆինանսական շարժին:







Հաշվետվությունները հրապարակվում են եռամսյակային կարգով, իսկ հետո փոխարինվում են տարեկան հաշվետվությամբ:

# ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ (ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

* * *

## *Հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացում և բարեփոխումներ.*

Ստորև ներկայացվում է հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացմանն ու բարեփոխումներին ուղղված հիմնական գործողությունները.

➢ ***Հանրային պաշտպանի գրասենյակի կարիքների գնահատում, հանրային պաշտպանների թվաքանակի ավելացման քաղաքականությանն ուղղված միջոցառումներ.***

ՀՊԳ կարիքների բավարարման խնդիրը լուծելուն ուղղված համակարգային ռազմավարություն մշակումը և դրանց իրագործման ուղղությամբ աշխատանքները կրում են մշտական բնույթ:

ՀՊԳ կարիքների գնահատման նպատակով շարունակաբար իրականացվում են թե՛ ընթացիկ, թե՛ տարեկան արդյունքներով ուսումնասիրություններ: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ են բերվում այն հիմնական կարիքները, որոնք առաջնային լուծում են պահանջում:

Գրասենյակի գործունեության առաջնային կարիքը հանրային պաշտպանների գերծանրաբեռնվածության թոթափումն է, ինչպես նաև խնդիր է նյութական ռեսուրսների սակավությունը: Յուրաքանչյուր տարի գրանցվում է հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածության կայուն աճ, ընդ որում՝ բավականին զգալի:

Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության շարունակական աճը պայմանավորված է գրասենյակի կողմից վարվող գործերի քանակի՝ յուրաքանչյուր տարի արձանագրվող կայուն աճի պայմաններում հանրային պաշտպանների հաստիքների տարիներ շարունակվող անփոփոխ թվով:

Ընդ որում, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված իրավիճակը պայմանավորված է ինչպես անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու քաղաքացիների և պետական մարմինների դիմումների կայուն աճով, այնպես էլ օրենսդրական փոփոխությունների արդյունքում իրավաբանական օգնություն

ստանալու իրավունք ունեցող շահառուների խմբերի ընդլայնմամբ:

«Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված է, որ քաղաքացիների դիմումների հիման վրա անվճար իրավաբանական օգնություն է տրամադրվում ստորև թվարկված սոցիալական խմբերի մեջ մտնող անձանց:

| № | «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա անվճար իրավաբանական օգնություն ստացող անձանց սոցիալական խմբերը |
|---|---|
| 1. | օրենքով սահմանված կարգով հաստատված՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապով զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամները |
| 2. | 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները. |
| 3. | դատապարտյալները. |
| 4. | ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամները. |
| 5. | Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցները. |
| 6. | գործազուրկները. |
| 7. | միայնակ բնակվող կենսաթոշակառուները. |
| 8. | առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք. |
| 9. | փախստականները. |
| 10. | Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացածները. |
| 11. | անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում: Սույն կետի իմաստով՝ անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որի ամսական եկամուտը չի գերազանցում «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափի կրկնապատիկը, որը չունի համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև, բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ |

| | |
|---|---|
| | սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց. |
| **12.** | հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք. |
| **13.** | օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձինք. |
| **14.** | Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողները. |
| **15.** | խոշտանգումից տուժած անձանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով. |
| **16.** | «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտանիքում բռնության ենթարկված անձանց: |
| **17.** | «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա հարուցված քաղաքացիական գործերով պատասխանողները: |

Ներկայումս ՀՊԳ-ն աշխատում է գերծանրաբեռնված: Գործող հաստիքներով, գործերի վերջին տարիներին գրանցվող աճի պարագայում մոտ ապագայում անհնարին կդառնա քրեական գործերով վարույթ իրականացնող մարմինների որոշումների ժամանակին կատարման ապահովումը, և ՀՊԳ դիմող բոլոր քաղաքացիներին քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով անվճար որակյալ իրավաբանական օգնության ժամանակին տրամադրումը: Հանրային պաշտպանի գրասենյակն ի վիճակի չի լինի ամբողջությամբ կատարել իր առաքելությունը՝ որակյալ իրավաբանական օգնության տրամադրումը:

Նշված իրավիճակը Պալատի գնահատմամբ կարող է շտկվել միայն ՀՊԳ-ին հանրային պաշտպանների լրացուցիչ հաստիքներ տրամադրելու միջոցով:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի 21.04.2009թ. թիվ ՆԿ-59-Ն կարգադրությամբ հաստատված «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագրից բխող միջոցառումների» ցանկով արդարադատության մատչելիությունն,

արդյունավետությունն և թափանցիկություն ապահովվող միջոցառումների շարքում 3.10 կետով որպես նպատակ-խնդիր նախատեսվել է անվճար իրավաբանական օգնության շրջանակների ընդլայնում եվրոպական չափանիշներին համապատասխան:

Նշված նպատակի իրագործման համար որպես ենթակառուցվածքային գործողություն սահմանվել է **հանրային պաշտպանների հաստիքային առկա թվաքանակը հասցնել առնվազն 75-ի:** Այդ գործողության կատարման վերջնաժամկետ է նախատեսվել **2010 թվականի մարտի 3-րդ տասնօրյակը**, սակայն 2021 թվականի դրությամբ Պալատին հատկացված գումար միայն 59 հանրային պաշտպանի հաստիքի համար, արդյունքում Հանրապետության Նախագահի **2010 թվականի կարգադրությունը 16 հանրային պաշտպանների հաստիքների մասով 2021 թականի դրությամբ էլ մնում է չկատարված**:

Վարվող գործերի ծանրակշիռ աճի պայմաններում 2021 թվականին աշխատանքի արդյունավետ կազմակերպման արդյունքում հնարավոր է եղել չավելացնել ՀՊԳ օժանդակ աշխատակազմի թվաքանակը:

Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության հարցը իրավասու պետական մարմիններին զուգահեռ ներկայացվում է ՀՊԳ կարողությունները զարգացնելու հարցում շահագրգիռ և ՀՊԳ հետ համագործակցող հասարակական կազմակերպություններին՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցով օժանդակ գործիքներով առկա իրավիճակը մեղմելու համար:

***<u>ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.</u>***

1) ՀՊԳ օժանդակ աշխատակազմի 18 հաստիքներից 8-ի աշխատավարձի դրույքաչափի 50%-ը վճարվում է Փաստաբանների պալատի բյուջեից, իսկ մյուս 50%-ը՝ պետական բյուջեի մասին համապատասխան օրենքով հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման համար հատկացված գումարից, քանի որ այդ հաստիքների գործառույթներն ուղղված են և՛ Փաստաբանների պալատի և՛ հանրային պաշտպանի գրասենյակի սպասարկմանը:

### *Հանրային պաշտպանի հաստիքների վարչատարածքային տեղաբաշխումը.*

Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզերում անվճար իրավաբանական օգնության տրամադրման արդյունավետությունն ապահովելու նպատակով հանրային պաշտպանների հաստիքները տեղաբաշխել են վարչատարածքային սկզբունքով՝ ըստ մարզերի, ինչպես նաև ըստ մասնագիտացման (քրեաիրավական, քաղաքացիաիրավական), դատարանների նստավայրերի և գործերի քանակի հաշվառմամբ, հաշվի առնելով նաև շահերի բախման առաջացման վտանգը:

Ներկայում գրասենյակը նստավայրեր ունի հանրապետության գրեթե բոլոր խոշոր քաղաքային բնակավայրերում: Բոլոր մարզերում ծառայություններ են մատուցվում թե՛ քրեաիրավական, թե՛ քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ:

Առկա ռեսուրսներով մարզերում անվճար իրավաբանական օգնության տրամադրման արդյունավետությունը և ռեսուրսների առավել օպտիմալ օգտագործումն ապահովելու նպատակով՝ յուրաքանչյուր տարվա վերջում կատարվում է հաշվետու տարվա ընթացքում վարված գործերի վիճակագրության ուսումնասիրություն, որի արդյունքում յուրաքանչյուր տարի կատարվում է հանրային պաշտպանների հաստիքների վերաբաշխում: Վերաբաշխումը կատարվում է հաշվի առնելով համապատասխան տարածքում անվճար իրավաբանական օգնության պահանջարկը, ինչպես նաև դատարանների և վարույթն իրականացնող մարմինների նստավայրերի տեղակայումը, շահերի բախման առաջացման վտանգը:

Ստորև ներկայացված քարտեզի վրա կարելի տեսնել հանրային պաշտպանների հաստիքների 2021 թվականի տեղաբաշխումը ըստ վարչատարածքային բաժանման.

* ***ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.*** Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում գործող հաստիքների հանրագումարը կազմում է հանրային պաշտպանի 29 հաստիք:

Կախված համապատասխան մարզում և/կամ մարզի քաղաքում անվճար իրավաբանական օգնության պահանջարկից, նախատեսված է հանրային պաշտպանի ոչ միայն 1 լրիվ, այլ նաև 0,5 և 0,25 դրույքներ:

Մարզում հանրային պաշտպանի մեկ հաստիքի մասնատումը 0,5, իսկ որոշ դեպքերում նաև 0,25 դրույքների՝ հնարավորություն է ընձեռնում առավել արդյունավետ կառավարել հանրային պաշտպանի աշխատաժամանակը, ինչպես նաև ապահովել անվճար իրավաբանական օգնության տրամադրումը ոչ միայն մարզկենտրոնում, այլ նաև տարածական առումով հեռու, սակայն մարզկենտրոնից ոչ պակաս բնակեցված վայրերում:

Հարկ է նկատել, որ հանրային պաշտպանների համաչափ ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև հանրային պաշտպանության հասանելիությունը և պատշաճ որակն ապահովելու նպատակով ընթացիկ տարվա ընթացքում որոշակի պարբերականությամբ ևս կատարվում է վարված գործերի քանակի վիճակագրական տվյալների ուսումնասիրություն և էական

նշանակություն ունեցող այլ հանգամանքների հաշվառմամբ անհրաժեշտության դեպքում ընթացիկ տարվա ընթացքում ևս կատարվում է հաստիքների վերաբաշխում:

### Հանրային պաշտպանի գրասենյակի մարզային նստավայրերի արդյունավետության բարձրացում.

Թեև գրասենյակը ներկայացված է գրեթե բոլոր մարզային քաղաքներում, սակայն սեփական պայմանների բացակայությամբ պայմանավորված՝ մարզային նստավայրերի գրասենյակները հիմնականում վարձակալվում են, ինչը լրացուցիչ ֆինանսական բեռ է ստեղծում գրասենյակի համար: Մարզային նստավայրերի վարձակալության բեռը թեթևացնելու նպատակով՝ Արարատի և Կոտայքի մարզերում մարզպետարանների հետ համագործակցության արդյունքում մարզպետարանների վարչական շենքերում տրամադրվել են աշխատասենյակներ:

Մարզերում անվճար իրավաբանական օգնության հասանելիությունը և արդյունավետություն բարձրացնելու նպատակով՝ մարզերը սպասարկող հանրային պաշտպանների հետ կնքվել են նրանց պատկանող ավտոմեքենաները գրասենյակի կարիքների համար անհատույց օգտագործելու մասին պայմանագրեր: Գրասենյակի կարիքների համար օգտագործելով հանրային պաշտպաններին մասնավոր հիմունքներով պատկանող ավտոմեքենաները՝ գրասենյակը փաստացի միայն փոխատուցում է վառելիքի ծախսերը, որոնց հատուցման համար յուրաքանչյուր առանձին դեպքում հանրային պաշտպանները ներկայացվում են համապատասխան փաստաթղթային հիմնավորումներ, որոնք անցնում են ստուգման ընթացակարգի մի քանի օղակներով:

Մարզերում իրավաբանական օգնության պատշաճ որակն ապահովելու նպատակով՝ մարզերը սպասարկող հանրային պաշտպանները պարտադիր մասնակցում են Փաստաբանների պալատի կողմից իրականացվող վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև մասնակից են դարձվում հանրային պաշտպանների մասնագիտական հմտությունները զարգացնելու նպատակով՝ տարբեր հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ հանրային պաշտպանների համար կազմակերպվող առանձին խումբ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ դասընթացներին, անձնական կարողությունների զարգացման ծրագրերին և մասնագիտական քննարկումներին:

Մատուցվող ծառայության որակի վերահսկողության նպատակով՝ ինչպես

հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը և տեղակալները, այնպես էլ գրասենյակի մշտադիտարկման խումբը պարբերաբար այցեր է կազմակերպում մարզեր:

### Հանրային պաշտպան դառնալու ընթացակարգի թափանցիկության բարձրացում և մրցակցության եղանակների կատարելագործում.

2014 թվականից սկսած[1] հանրային պաշտպանների հաստիքների համալրումն իրականացվում է մրցութային կարգով[2]:

Փաստաբանների պալատի կողմից հաստիքների համալրման մրցութային քաղաքականության որդեգրումը նպատակ է հետապնդում, նախ և առաջ, ապահովել հանրային պաշտպան դառնալու գործընթացի թափանցիկությունը և օբյեկտիվ գնահատել հանրային պաշտպանի թեկնածուի մասնագիտական պատրաստվածությունը:

Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացվող մրցույթն իրականացվում է երկու փուլով՝ գրավոր և բանավոր (հարցազրույց): Մրցույթի կազմակերպման և թեկնածուների աշխատանքների գնահատման համար յուրաքանչյուր տարի ստեղծվում է համապատասխան մրցութային հանձնաժողով, որն անցկացնում է մրցույթի ողջ ընթացքը և գնահատում է քննական առաջադրանքները:

Մրցույթի առաջադրանքը ընտրվում է թեկնածուների կողմից վիճակահանության միջոցով, իսկ առաջադրանքների գնահատման համար մշակված է այնպիսի համակարգ, որը հնարավորություն է տալիս գնահատման գործընթացում բացառել սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը:

Մրցույթի գրավոր փուլի ընթացքն՝ ըստ կարգի, իրականացվում է աշխատանքի ստուգման գործընթացում թեկնածուի անձի բացահայտումը (աշխատանքի հեղինակի նույնականացումը) բացառող կարգով:

Մրցույթի մասնակիցն իր աշխատանքը տպագրում է երկու օրինակից, որոնց վրա փակցնում է այդ պահին պատահականության սկզբունքով արկղից վերցված ծածկագրերը (շտրիխ կոդ): Մրցույթի մասնակիցն իր աշխատանքի տպագրված օրինակներից մեկի վրա ստորագրում է ու անձամբ տեղադրում կնքված արկղի

---

[1] Հանրային պաշտպանների հաստիքների համալրման մրցութային կարգը ներդրվել է 2013 թվականի հոկտեմբերից, իսկ առաջին մրցույթն անց է կացվել 2014 թվականի հունվարին:

[2] Հանրային պաշտպանի թափուր հաստիքն արտամրցութային կարգով համալրվում է միայն այն դեպքում, երբ տվյալ հաստիքը մրցութային կարգով անցած թեկնածուներով համալրել հնարավոր չէ, օրինակ՝ երբ ՀՊԳ մարզային գրասենյակում առկա թափուր հաստիքի համալրման համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար որևէ թեկնածու չի դիմել:

մեջ, իսկ աշխատանքի մյուս օրինակը, որի վրա առկա է միայն ծածկագիր (շտրիխ կոդը)՝ հանձնվում է մրցութային հանձնաժողովին: Գրավոր աշխատանքի ստուգման գործընթացում մրցութային հանձնաժողովի տիրապետության տակ եղած միայն ծածկագրով գրավոր աշխատանքը հնարավորություն չի տալիս նույնականացնելու աշխատանքի հեղինակի անձը:

Ծածկագրերով գնահատականները հրապարակելուց հետո, յուրաքանչյուր թեկնածու իր ծածկագրի և միավորի մասին տեղեկանում է կնքված արկղը բացելուց հետո:

Գրավոր փուլը հաղթահարած հավակնորդները հնարավորություն են ստանում մասնակցելու հարցազրույցի փուլին: Հարցազրույցի փուլում հաղթող ճանաչված հավակնորդներն ընդգրկվում են հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում:

Հաշվետու տարվա ընթացքում առաջացած թափուր պաշտոնները ևս համալրվել են նախորդող տարիներին անցկացված մրցույթները հաղթահարած փաստաբաններով, իսկ մրցույթը հաղթահարած փաստաբանների ցուցակից ներգրավելու անհնարինության պայմաններում նաև այլ՝ գերակշիռ դեպքերում երիտասարդ (նոր արտոնագիր ստացած) փաստաբաններով:

2021 թվականի համար հանրային պաշտպանների թեկնածուների ցուցակում ընդգրկված 21 փաստաբանների գերակշիռ մեծամասնության, մասնավորապես 15 փաստաբանի հետ տարվա ընթացքում կնքվել են աշխատանքային պայմանագրեր: Մյուս բոլորին ևս առաջարկություններ ներկայացվել է տարվա ընթացքում թափուր մնացած հաստիքները համալրելու, սակայն վերջիններս տարբեր պատճառաբանություններով չեն ընդունել դրանք:

2021 թվականի նոյեմբերին Փաստաբանների պալատը 2022 թվականի համար հայտարարել է մրցույթ հանրային պաշտպանի **11 հաստիքի** համալրման նպատակով:

Հայտարարված մրցույթի գրավոր փուլին մասնակցել են **27 փաստաբան**: Մրցույթի գրավոր փուլը հաղթահարել և մրցույթի բանավոր փուլին մասնակցելու իրավունքն են ստացել ընդհանուր 8 փաստաբան՝ 2-ը քաղաքացիաիրավական (վարչաիրավական) մասնագիտացմամբ, 6-ը քրեաիրավական մասնագիտացմամբ:

Նշված բոլոր փաստաբաններից 6-ը հաղթահարել են նաև մրցույթի բանավոր փուլը:

Հարկ է ընդգծել, որ մրցույթային հանձնաժողովի ամբողջ գործունեությունը

կազմակերպվել է առավելագույն թափանցիկությամբ և բացարձակ օբյեկտիվորեն: Ընթացիկ որոշումները և արդյունքները շարունակաբար հրապարակվել են Պալատի կայքէջում :



*(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝[https://www.advocates.am/news/view/3000.html](https://www.advocates.am/news/view/3000.html)):*

### ***Հանրային պաշտպանների մասնագիտացումն ապահովելուն ուղղված միջոցառումների մշակում և իրականացում.***

2014 թվականից սկսած Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների թափուր տեղերը համալրելու համար հանրային պաշտպանների մրցույթն անց է կացվում և հանրային պաշտպանները նշանակվում են աշխատանքի ըստ **քրեական** և **քաղաքացիաիրավական (վարչաիրավական)** մասնագիտացման:

2021 թվականին Երևան քաղաքում գործել է հանրային պաշտպանի 30 հաստիք (հանրային պաշտպանների ընդհանուր հաստիքների 51%-ը), որից 22 հաստիքը քրեական մասնագիտացմամբ (73%), իսկ 8-ը՝ քաղաքացիական (վարչական) մասնագիտացմամբ (27%):

***ՀՊԳ հաստիքների տեղաբաշխման հարաբերակցությունն ըստ վարչատարածքային բաժանման (Երևան քաղաք և մարզեր)***

***Երևան քաղաքում ՀՊԳ հաստիքների տեղաբաշխման հարաբերակցությունն ըստ մասնագիտացման***







Հնարավորության դեպքում հանրային պաշտպանների մասնագիտացումն ապահովվում է նաև մարզերում: Այն մարզերում, որտեղ առկա են հանրային պաշտպանի մի քանի հաստիքներ, հանրային պաշտպանների գործունեությունը նույնպես իրականացվում է ըստ քրեական և քաղաքացիական (վարչական) մասնագիտացման: Իսկ այն մարզերում, որտեղ գործում է հանրային պաշտպանի նվազ քանակի հաստիքներ, ապա հաշվի առնելով գործերի վիճակագրական տվյալները հաստիքները համալրվում են այնպես, որ նույն հաստիքը զբաղեցնող հանրային պաշտպանը անհրաժեշտության դեպքում մարզի բնակչությանն ապահովի իրավական օգնության տրամադրումը և՛ քրեական և՛ քաղաքացիական (վարչական) գործերով:

### ***Հանրային պաշտպանների խրախուսման եղանակների և ռոտացիոն համակարգի ներդնում՝ հաստիքների որոշակի տոկոսը սկսնակ փաստաբաններով համալրելու նպատակով.***

2015 թվականից Փաստաբանների պալատում գործում է հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և արդյունավետության գնահատման համակարգ, որն ապահովվում է **«Հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և աշխատանքի արդյունավետության գնահատման» հրահանգով** սահմանված չափորոշիչներով:

Նշված հրահանգը սահմանում է հանրային պաշտպանի գրասենյակում առանց մրցույթի անցկացման հանրային պաշտպանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի մեկամյա ժամկետը ևս մեկ տարով երկարաձգելու համար հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և

աշխատանքի արդյունավետության գնահատման չափորոշիչները և գնահատման ընթացակարգը:

Նշված հրահանգի համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում գործող հանրային պաշտպաններից յուրաքանչյուրի աշխատանքն՝ ըստ հրահանգով սահմանված միավորների, գնահատման հանձնաժողովի կողմից գնահատվում է ***ընդհանուր չափորոշիչներով***, որոնց շրջանակներում հաշվի են առնվում հանրային պաշտպանի կողմից օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին մասնակցած լինելը, «Փաստաբանության մասին» օրենքի կամ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտման համար կարգապահական տույժի ենթարկված չլինելը, աշխատանքային կարգապահության խախտման համար տույժի ենթարկված չլինելը, հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգով փաստաբանական վարույթին վերաբերվող պահանջները կատարած լինելը:

Հրահանգով հանրային պաշտպանի աշխատանքը գնահատվում է նաև ***ըստ հանրային պաշտպանի մասնագիտական ուղղվածության (քրեական ու քաղաքացիական և վարչական) չափորոշիչների:***

Հրահանգի համաձայն՝ ***քրեական ուղղվածության*** հանրային պաշտպանների աշխատանքը գնահատվում է հաշվի առնելով հանրային պաշտպանի արդարացումների (լրիվ կամ մասնակի), ինչպես նաև արդարացնող և ոչ արդարացնող հիմքով վարույթը կարճված գործերի թիվը, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու կամ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերը, ավելի մեղմ հոդվածով կամ հոդվածի մասով վերաորակումները, տուգանքի նշանակումները, սանկցիայով նախատեսված նվազ խիստ պատժի նշանակումները, անչափահասի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակումները, վերջնական դատական ակտի դեմ բերված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, ինչպես նաև մեղադրանքի կողմի բերած՝ մերժված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, վերջնական դատական ակտի դեմ լրիվ կամ մասնակի բավարարված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, որպես կալանավորման այլընտրանքային միջոց դատարանի կողմից գրավ ընտրելը, որպես խափանման միջոց ընտրված կալանքը մեկ այլ խափանման միջոցով փոխարինվելը և այլ չափորոշիչներ:

***Քաղաքացիական և վարչական ուղղվածության*** հանրային պաշտպանների գործունեությունը գնահատվում է հաշվի առնելով հանրային պաշտպանի վարչական մարմին կամ դրա վերադաս մարմնին ուղղված դիմումների, բողոքների, կատարված հարցումների թիվը, վարչական մարմնի կամ դրա վերադասի կողմից բավարարված վարչական բողոքների թիվը, կազմված հայցադիմումների, դիմումների թիվը, hօգուտ վստահորդի կայացված վերջնական դատական ակտերը, միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, վերջնական դատական ակտի դեմ բերված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը, վերջնական դատական ակտի դեմ լրիվ կամ մասնակի բավարարված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը և այլ չափորոշիչներ:

Հանրային պաշտպաններին նյութապես խրախուսելու, պարգևատրելու կամ այլ սոցիալական երաշխիքներ տրամադրելու համար պետության կողմից միջոցներ չի տրամադրվում: Այդուհանդերձ հընթացս, ինչպես նաև տարվա արդյունքների ամփոփմամբ տարատեսակ եղանակներով իրականացվում են ոչ նյութական խրախուսանքի միջոցներին, այդ թվում՝ տարվա արդյունքների ամփոփմամբ որոշ հանրային պաշտպանների տրվում են պատվոգրեր և շնորհակալագրեր:

### ***Հանրային պաշտպանների կողմից կատարված ծախսերի փոխհատուցման համակարգի շարունակական կիրառում.***

Դեռևս 2016 թվականին ներդրվել էր հանրային պաշտպանների կողմից կատարված ծախսերի փոխհատուցման համակարգ, որը շարունակաբար կիրառվել է նաև 2021 թվականի ընթացքում:

Սահմանված կարգավորումների համաձայն՝ հանրային պաշտպանի կողմից կատարված ծախսը ենթակա է փոխհատուցման, եթե՝

1) այդ ծախսի կատարումը անհրաժեշտ է հանրային պաշտպանություն իրականացնելու համար, և

2) այդ ծախսի կատարումը տվյալ պահին հնարավոր չէր նախապես կազմակերպել պալատի միջոցով, և

3) առկա է այդ ծախսի կատարումը հիմնավորող փաստաթուղթ, և

4) այդ ծախսի կատարումը չի գերազանցում 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամը, իսկ մարզային գրասենյակների դեպքում՝ կոմունալ ծառայությունների գծով այդ ծախսի գումարը չի գերազանցում 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ

դրամը, և

5) այդ ծախսի փոխհատուցման հայտը ներկայացվել է կարգով նախատեսված ժամկետում, և

6) այդ ծախսի կատարումը բխում է կարգի պահանջներից:

### Անվճար իրավական օգնության տրամադրման ծառայության որակի բարձրացում և ընթացակարգերի նկատմամբ վերահսկողության կառուցակարգերի մշակում և ներդրում.

Գոյության ամբողջ ընթացքում թե՛ սեփական ուժերով, թե՛ տարատեսակ համագործակցությունների շրջանակներում գրասենյակում իրականացվել են շարունական աշխատանքներ մատուցվող ծառայությունների որակը հետզհետե բարձրացնելու, հանրային պաշտպանների հմտությունները ու գիտելիքները բազմաոլորտ զարգացնելու, նոր մեթոդաբանության և գործիքակազմի ներդնելու ուղղությամբ: Շարունակաբար բարելավվել է ներքին կազմակերպումը, վարչարարությունը և վերահսկողությունը, ինչպես նաև գրասենյակի գործունեության թափանցիկությունը:

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության օժանդակությամբ հանրային պաշտպանի գրասենյակում ներդրվել է էլեկտրոնային տեղեկատվական և կառավարման համակարգը, ինչի շնորհիվ գրեթե ամբողջությամբ էլեկտրոնայնացվել է ներքին վարչարարությունը: Դրա հիման վրա ստեղծվել է անվճար իրավաբանական օգնություն ստացող անձանց, վարվող գործերի ընթացքի և արդյունքների վերաբերյալ տվյալների էլեկտրոնային համընդգրկուն շտեմարան՝ տարատեսակ, այդ թվում՝ կատարողական հաշվետվությունների արտահանման հնարավորությամբ:

Մատուցվող ծառայությունների որակը հետզհետե բարձրացնելու նպատակով հանրային պաշտպանի գրասենյակում ներդրված են հսկողության և վերահսկողության ճկուն մեխանիզմներ: Մասնավորապես, հանրային պաշտպանների կատարած աշխատանքի նկատմամբ անմիջական հսկողություն են իրականացնում գրասենյակի ղեկավարը և նրա տեղակալները: Ընդհանուր հսկողությունը գրասենյակի գործունեության նկատմամբ իրականացնում է Պալատի նախագահը: Նրան այդ հարցում օժանդակում է Պալատի նախագահի տեղակալը և հանրային պաշտպանի գրասենյակի մշտադիտարկման խումբը:

Անվճար իրավաբանական օգնության տրամադրման սահմանված ընթացակարգերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված մշտադիտարկման խումբն

իրականացնում է հանրային պաշտպանների կողմից վարվող գործերի վերաբերյալ գրասենյակի էլեկտրոնային տեղեկատվական համակարգում առկա տվյալների ստուգում, անճշտությունները վեր հանում, դատական նիստերի դիտարկում, հանրային պաշտպանների կողմից առանց հարգելի պատճառների չներկայանալու դեպքերի հայտնաբերում, փաստաբանական վարույթներին ներկայացվող պարտադիր պահանջների ստուգում, վստահորդների հետ տարվող աշխատանքների որակի գնահատում:

Գրասենյակի կողմից ցուցաբերվող իրավաբանական օգնության որակի վերահսկողության նպատակներով յուրաքանչյուր տարվա վերջում իրականացվում է հանրային պաշտպանների կատարած աշխատանքի արդյունավետության գնահատում՝ որակական և քանակական չափանիշներով: Հանրային պաշտպանների միջև առողջ մրցակցության մթնոլորտ ձևավորելու, մատուցվող ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ գնահատման արդյունքներով հաշվետու տարվա ընթացքում նվազ արդյունավետություն ցուցաբերած հանրային պաշտպանների հետ աշխատանքային պայմանագրերը չի երկարաձգվում և նրանց փոխարինելու և թափուր հաստիքները նոր, այդ թվում՝ երիտասարդ բանիմաց փաստաբաններով համալրելու նպատակով, յուրաքանչյուր տարի կազմակերպվում է բաց, թափանցիկ մրցույթ: Մրցույթին առանց սահմանափակման կարող է մասնակցել յուրաքանչյուր՝ արտոնագրի գործողությունը չկասեցված փաստաբան:

* * *

## ՀՊԳ հեղինակության բարձրացում.

➢ ***ՀՊԳ գործունեության լայն լուսաբանում, այդ թվում՝ հանրային պաշտպանների վարած գործերի և արձանագրված արդյունքների (արդարացումներ և այլ հաջողություններ) վիճակագրության հրապարակում.***

Պալատը, և մասնավորապես նաև գրասենյակը, մշտապես իրականացնում են հանրային իրազեկման միջոցառումներ, որոնք միտված են բարձրացնելու քաղաքացիների իրազեկվածությունը պաշտպան ունենալու իրավունքի և գրասենյակի ծառայությունների վերաբերյալ: Արդյունքը՝ յուրաքանչյուր տարի գրասենյակ դիմող անձանց քանակի կայուն աճն է:

2021 թվականին Փաստաբանների պալատը շարունակել է իրականացնել զանգվածային լրատվության տարբեր միջոցներով հանրային պաշտպանների գործունեության լուսաբանմանն ուղղված միջոցառումները:

Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության և հանրային պաշտպանների առանձին գործերի լուսաբանումն իրականացվել է հեռուստահաղորդումների, ռադիոհաղորդումների և համացանցի իրավական կայքերի միջոցով:

Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության լուսանբանման համար 2021 թվականին կարևոր գործիք է եղել Իրավունքների պաշտպանության նախաձեռնություն հիմնադրամի աջակցությամբ նախորդ տարի գործի դրված հանրային պաշտպանի գրասենյակի կայքը, որտեղ հրապարակվում են տեղեկությունների գրասենյակի ընթացիկ գործունեության վերաբերյալ, իր կողմից վարված գործերով արձանագրված արդյունքների, ռազմավարական դատավարությունների, իր նախաձեռնությունների, վարվող գործերի վիճակագրական տվյալների վերաբերյալ:




Կայքում զետեղված են ինչպես ընդհանուր տեղեկություններ գրասենյակի վերաբերյալ, այնպես էլ ՀՊԳ նստավայրերի, դրանց հասցեների և նստավայրի սպասարկող հանրային պաշտպանների և նրանց կոնտակտային տվյալների վերաբերյալ:





Դրան զուգահեռ, գործունեության վերաբերյալ իրազեկման համար օգտագործվել են նաև «Facebook» սոցիալական ցանցում բացված՝ հանրային պաշտպանի գրասենյակի օգտահաշիվը, որի միջոցով գրասենյակը կիսվել է կայքում հրապարակված նյութերով:

Անվճար իրավաբանական օգնության տրամադրման վերաբերյալ հանրությանն իրազեկելու նպատակով՝ Իրավունքների պաշտպանության նախաձեռնություն հիմնադրամի հետ համատեղ իրականացված ծրագրի շրջանակներում ստեղծվել են տեղեկատվական անիմացիոն հոլովակ: Հոլովակը տեղադրվել է հանրային պաշտպանի գրասենյակի կայքի գլխավոր էջում: Այն տեղադրվել նաև գրասենյակի «Facebook» սոցիալական ցանցում բացված օգտահաշվում և տարածվել վճարովի առաջխաղացման եղանակով:

* * *

### *Հանրային պաշտպանների մասնագիտական որակների բարձրացում և շարունական վերապատրաստումների ապահովում.*

Վերապատրաստման պարտադիր դասընթացներին զուգահեռ՝ հանրային պաշտպանների մասնագիտական հմտությունները զարգացնելու նպատակով՝ տարբեր հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ հանրային պաշտպանների համար կազմակերպվել են առանձին խումբ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ դասընթացներ, անձնական կարողությունների զարգացման ծրագրեր և մասնագիտական քննարկումներ:

Եվրոպայի խորհրդի գրասենյակի հրավերով 15 հանրային պաշտպանի

հնարավորություն է տրվել մասնակցել «Կանանց հասանելիությունը անրդարադատությանը» թեմայով վերապատրաստման դասընթացին:

Եվրոպայի խորհրդի գրասենյակի հրավերով 4 հանրային պաշտպան 2021 թվականի ապրիլի 8-ին և 9-ին մասնակցել են «Ատելության խոսքի եվրոպական չափանիշները և ատելության խոսքի ազգային կարգավորումների համեմատական վերլուծություն՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների օրինակների հիման վրա» թեմայով դասընթացին:

* * *

### *Անվճար իրավական օգնության տրամադրման այլընտրանքային համակարգերի ներդրում, pro bono մշակույթի զարգացում*

Չնայած հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածությունը մեղմելու համար առանցքային նշանակություն ունի լրացուցիչ հաստիքների տրամադրումը՝ այդուհանդերձ Պալատի կողմից ձեռնարկվում են նաև հավելյալ միջոցներ այլընտրանքային լուծումներով վիճակը շտկելու ուղղությամբ: Այդ նպատակով Պալատը մշտապես հանդես է գալիս տարատեսակ նախաձեռնություններով:

Այդպիսի օրինակ է «Պրո Բոնո» ծրագրի ներդրումը հանրային պաշտպանի գրասենյակում: Մասնավորապես, Պալատի նախաձեռնությամբ գրասենյակի ծանրաբեռնվածությունը մեղմելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարության հետ համաձայնեցմամբ մշակվել և ներդրվել է «Պրո Բոնո» ծրագիրը, որի շրջանակներում անհատ փաստաբաններն առանձին գործերով իրավաբանական օգնություն են ցուցաբերում գրասենյակի շահառուներին, ինչի դիմաց Պալատը նրանց տրամադրում է աշխատասենյակ և աշխատանքային անհրաժեշտ պարագաներ: Այս գործիքը Երևան քաղաքում որոշակի դրական ազդեցություն է ունենում գրասենյակի շանրաբեռնվածությունը նվազեցնելու հարցում, միաժամանակ հնարավորություն է տալիս երիտասարդ փաստաբաններին հաղթահարել գործունեությունը սկսելու սկզբում առաջացող տեխնիկական և նյութական դժվարությունները:

Ծրագրի շրջանակներում 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ներգրավվել է 10, երկրորդ կիսամյակում ևս՝ 10 փաստաբան:

Հաշվի առնելով հատկապես քաղաքացիական գործերով բնակչության անվճար իրավական օգնության պահանջարկը, Փաստաբանների պալատը Փաստաբանական դպրոցի իրավաբանական կլինիկայի հետ համատեղ

իրականացնում է նաև քաղաքացիներին անվճար իրավական խորհրդատվության տրամադրման նախաձեռնություն, որը շարունակվել է նաև 2021 թվականին:

Ավելի քան յոթ տարի է, ինչ Փաստաբանների պալատում յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը հայտարարվել է անվճար խորհրդատվության տրամադրման օր:

2021 թվականի ընթացքում, Փաստաբանների պալատի և Փաստաբանական դպրոցի ջանքերով Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության որոշ մարզերում անվճար իրավաբանական խորհրդատվություն է տրամադրել **566 քաղաքացու**: Բանավոր խորհրդատվություններին զուգահեռ, ի թիվս այլ իրավական բնույթի փաստաթղթերի, կազմվել է **7 հայցադիմում, 5 հատուկ վարույթի գործերով դիմում, 1 հայցադիմումի պատասխան**:



Այլընտրանքային լուծումներով գրասենյակի գերծանրաբեռնվածության խնդիրը շտկելու նպատակով Պալատը մշտապես համագործակցություն է փնտրում գրասենյակի կարողությունները զարգացնելու հարցում շահագրգիռ և գրասենյակի հետ համագործակցության պատրաստ միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցով օժանդակ գործիքներով առկա իրավիճակը մեղմելու համար: Հարկ է նկատել, որ այդ ծրագրերը ևս կարող են առավել արդյունավետ լինել և հաջողված արդյունքներ գրանցել, եթե գրասենյակը կաշկանդված չլինի օրենսդրական մակարդակի մի շարք սահմանափակումներով:

Այսպես, 2021 թվականին շարունակվել է «Իրավունքների պաշտպանության նախաձեռնություն» հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագիրը, որի շրջանակներում 8 ամիս շարունակ երկու փաստաբան, ներգրավվելով Պրո Բոնո միջառմանը, անվճար իրավաբանական օգնություն են ցուցաբերել ՀՊԳ շահառուներին՝ այդպիսով թոթափելով գրասենյակի և հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը:

## ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ. ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ***Փաստաբանական դպրոցում ուսուցումն իրականացվում է ըստ մասնագիտական ուղղվածության.***

2014 թվականի աշնանային հոսքի ընդունելությունից սկսած Փաստաբանական դպրոցում ուսուցումը կազմակերպվում է ըստ ***քրեաիրավական*** և ***քաղաքացիաիրավական մասնագիտական ուղղվածությունների***, ինչի արդյունքում համապատասխան մասնագիտացում ընտրած ունկնդիրները

ուսումնական պլանով նախատեսված առարկաներից մոտ 90% հարաբերակցությամբ անցնում են նեղ մասնագիտական առարկաներ, օրինակ՝ քրեական ուղղվածության ունկնդիրները քրեաիրավական մասնագիտացման առարկաներ, իսկ մնացած առարկաները հարակից են և կրում են ընդհանուր բնույթ՝ անկախ ունկնդրի մասնագիտացումից, օրինակ՝ փաստաբանի վարքագծի, հոգեբանության հիմունքների, սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների հետ կապված առարկաները:

Հաշվետու ժամանակահատվածում Փաստաբանական դպրոցն իրականացրել է երկու ընդունելություն՝ 2021 թվականի գարնանային հոսքի և 2021 թվականի աշնանային հոսքի համար:

***2021 թվականի գարնանային հոսքի ընդունելության արդյունքներով Դպրոց է ընդունվել և դասընթացներին ներգրավվել թվով 99 ունկնդիր, որից՝***

ա. քրեաիրավական ուղղվածությամբ՝ **24** (**23** առկա, **1** հեռավար),

բ. քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածությամբ՝ **50** (**46** առկա, **4** հեռավար),

գ. հատուկ դիմորդի ուսուցման ծրագրով՝ **20** ունկնդիր (առկա՝ 20):

***2021 թվականի աշնանային հոսքի ընդունելության արդյունքներով Դպրոց է ընդունվել և դասընթացներին ներգրավվել թվով 98 ունկնդիր, որից՝***

ա. քրեաիրավական ուղղվածությամբ՝ **28** (**22** առկա, **6** հեռավար),

բ. քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածությամբ՝ **50** (**46** առկա, **4** հեռավար),

գ. հատուկ դիմորդի ուսուցման ծրագրով՝ **20** ունկնդիր (առկա՝ **20**):

### ***Փաստաբանական դպրոցի ունկնդիրների որակավորման քննությունները.***

Փաստաբանական դպրոցի ունկնդիրների (շրջանավարտների) որակավորման քննություններն անցկացնում է Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը:

Գործող կարգի համաձայն՝ Փաստաբանական դպրոցի ունկնդիրն ավարտելով ուսուցումը դպրոցում, որակավորման քննությանը մասնակցելու նպատակով Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան որակավորման հանձնաժողովին է ներկայացնում սահմանված ձևի լրացրած և ստորագրած դիմումը:

 

**2021թ. գարնան որակավորման քննություններին մասնակցել է ընդհանուր 92 հավակնորդ,** որից՝

- հանձնել է 80 հավակնորդ.
- չի հանձնել 12 հավակնորդ:

**2021թ. գարնան որակավորման քննություններին մասնակցել է ընդհանուր 109 հավակնորդ,** որից՝

- հանձնել է 97 հավակնորդ.
- չի հանձնել 12 հավակնորդ:

### *Նշանակվել է փաստաբանական դպրոցի նոր տնօրեն*

2021թ. հոկտեմբերի 5-ին «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կառավարման խորհուրդը միաձայն ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն է նշանակել Արա Զոհրաբյանին:

### *Փաստաբանի հավակնորդների երդման արարողությունը.*

«Փաստաբանության մասին» օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ առաջին անգամ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալիս, փաստաբանը Փաստաբանների պալատի խորհրդի առջև հանդիսավոր պայմաններում երդում է տալիս:






(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/2958.html )

- ✓ 67 փաստաբան արտոնագիր են ստացել 2021 թվականի հունիսի 26-ին տեղի ունեցած առցանց նիստին:
- ✓ 58 փաստաբան արտոնագիր են ստացել 2021 թվականի դեկտեմբերի 6-ին՝ Հայաստանում փաստաբա-նության կազմավորման 102 ամյակի օրը: Փաստաբանական համայնքը համալրվել է նոր փաստաբաններով (*Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում, ներկայացված է մեկ օրինակ հղում՝ https://www.advocates.am/news/view/3006.html):*

# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2021 թվականին շարունակվել են աշխատանքները Հայաստանի Հանրապետության մարզերում մարզային համակարգողների ինստիտուտի զարգացման ուղղությամբ, ինչն առանցքային նշանակություն ունի Փաստաբանների պալատի մարզային քաղաքականության ոլորտում:

Մարզային համակարգման կանոնակարգերի շարունական բարեփոխման համատեքստում՝ Փաստաբանների պալատի նախագահի 2021 թվականի ապրիլի 28-ի թիվ 81-Լ որոշմամբ ծավալուն փոփոխություններ են կատարվել նախորդ տարի հաստատված «Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգում. կարգը հաստատվել է նոր խմբագրությամբ: Մասնավորապես զարգացվել են մարզային համակարգողի նստավայրի, թեկնածուների առաջադրման վերաբերյալ կարգավորումները, վերանայվել է մարզային համակարգողի ընտրության համար հաշվիչ հանձնաժողով ձևավորվորելու կանոնները, հստակեցվել է եզրութաբանական մի շարք հարցեր:

2021 թվականին լրացել է մի շարք գործող մարզային համակարգողների լիազորությունների ժամկետը, սակայն հաշվի առնելով կորոնավիրուսային հիվանդությամբ (Covid-19) պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում կարանտին սահմանված լինելու հանգամանքը մարզային համակարգողի ընտրություններ հնարավոր չի եղել կազմակերպել: Հիմք ընդունելով «Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի պահանջները՝ այդ՝ Շիրակի, Լոռու, Սյունիքի, Արմավիրի, Կոտայքի, Գեղարքունիքի, Արարատի մարզերում Փաստաբանների պալատի նախագահը 8 (ութ) ամիս ժամկետով՝ մինչև 2022 թվականի մարտի 28-ը, նշանակել է մարզային համակարգողներ:

Մարզերում գործունեություն ծավալող փաստաբանների մասնագիտական կարողությունների և հմտությունների կատարելագործմանն աջակցելու և վերապատրաստման գործընթացն էլ ավելի արդյունավետ դարձնելու նպատակով Փաստաբանների պալատը կազմակերպել է վերապատրաստումներ դասընթացներ հենց ՀՀ մարզերում (*Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում, ներկայացված է մեկ օրինակ հղում՝ https://www.advocates.am/news/view/2995.html):*

# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

## *Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի գործունեություն*



Հայաստանի Հանրապետությունում փաստաբա-նության՝ որպես արդարադատության համակարգի ինստիտուտի զարգացման և մասնագիտության նկատմամբ հարգանքի ձևավորման համար կարևորագույն նախադրյալ է հանդիսանում Փաստաբանների պալատի անդամ փաստաբանների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող այլ պետության փաստաբանների իրավունքների պաշտպանությունն ապահովելը, ինչպես նաև այդ իրավունքների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ միջավայր ստեղծելը: Այդ նպատակով դեռևս 2014 թվականին Փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ ստեղծվել էր **փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողով,** որի նպատակն է միջոցներ ձեռնարկել փաստաբանների իրավունքներն ու մասնագիտական գործունեությունը բոլոր տեսակի (հատկապես՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների) սպառնալիքներից, խոչընդոտներից կամ ցանկացած տեսակի այլ հակաիրավական միջամտությունից (ոտնձգությունից) պաշտպանելու համար:

Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի գործունեության արդյունավետության առանցքում է հանձնաժողովի աշխատանքների հանրայնացում՝ փաստաբանների իրավունքների իրականացման խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը, տարածումը և քննարկումների կազմակերպումը:

2021 թվականին հանձնաժողովը արձանագրել է փաստաբանի և նրա վստահորդների հեռախոսային խոսակցությունները գաղտնալսելու վերաբերյալ դեպք: Մասնավորապես պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեիում քննված

քրեական գործի նյութերում առկա են «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված ամփոփագրեր, որոնց մի մասը վերաբերում են նույն գործով պաշտպան հանդիսացող փաստաբանին պատկանող բջջային հեռախոսահամարի գաղտնալսումներին: Նշված ամփոփագրերի ուսումնասիրությամբ նաև ի հայտ է եկել, որ հեռախոսային խոսակցությունների մի մասը վերաբերում են փաստաբանի և այլ քրեական գործերով վերջինիս պաշտպանյալների հետ ունեցած հաղորդակցությանը, որոնք այլ քրեական գործերով հանդիսանում են փաստաբանական գաղտնիք պարունակող տվյալներ:

Արձանագրված դեպքի կապակցությամբ հանձնաժողովը հանդես է եկել՝ հրապարակային հայտարարությամբ՝ դատապարտելով քրեական հետապնդման մարմինների կողմից փաստաբանական գաղտնիքը խախտելուն ուղղված գործողությունները, ինչպես նաև գաղտնալսման արդյունքները ոչնչացնելուց քննիչի հրաժարվելը:

Հանձնաժողովը նաև պահանջել է իրավական գնահատական տալ, ինչպես՝ առանց դատարանի որոշման համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացրած, այնպես էլ՝ փաստաբանի և վերջինիս վստահորդի (վստահորդների) միջև հեռախոսային խոսակցություններն ապօրինի գաղտնալսած պաշտոնատար անձանց գործողություններին:

Առանձին դեպքերում հանձնաժողովը քննարկելով փաստաբանների ներկայացրած տեղեկություններն իրենց մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու փորձերի վերաբերյալ՝ դիմել է իրավասու մարմիններին այդ դեպքերը քննարկման առարկա դարձնելու միջնորդություններով: Փաստաբանը մի դեպքում նաև պնդել է, որ այդ խնդիրները հետևանք են իր երիտասարդ կին լինելու հիմքով խտրական վերաբերմունքի: Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովն առանձնակի մտահոգությամբ արձանագրել է նման իրավիճակի անընդունելի լինելը իրավական պետությունում:

Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովից բացի՝ Փաստաբանների պալատում գործում է նաև ***արագ արձագանքման հանձնախումբ,*** որն արձանագրում է փաստաբանի մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանի լիազորությունների իրականացման խոչընդոտման դեպքերը կամ փաստաբանի նկատմամբ այլ անօրինական գործողությունները, ինչպես նաև նպաստում է փաստաբանների մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանների լիազորությունների իրականացման խոչընդոտները վերացնելուն:

Արագ արձագանքման հանձնախումբը իր գործիքակազմում հաճախակի օգտվում է Ոստիկանության հետ Փաստաբանների պալատի կնքած հուշագրի շրջանակում ձևավորված կապի խողովակներից, որոնք արդյունավետ միջոց են խնդիրների օպերատիվ լուծման հարցում: Առանձին խնդիրներ լուծում են ստանում պետական մարմինների հետ համագործակցության արդյունքում:

Ըստ անհրաժեշտության՝ տեղում խնդրահարույց իրավիճակները արձանագրելու համար հանձնախումբ կատարում նաև այցեր: Այդ արձանագրումները հետագայում ոչ միայն օգտագործվում են փաստաբանների կողմից իրենց և իրենց վստահորդների իրավունքների խախտումների փաստերը հիմնավորելու համար, այլև համապատասխան հարթակներում բարձրաձայնվում են իրավասու մարմինների պատասխանատու պաշտոնատար անձանց առջև:

## ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ԳՈՐԾԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ԱՌԳՐԱՎՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

2021 թվականի հուլիս ամսին լրատվամիջոցներում հրապարակումների են տարածվել, որ Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցները Վերաքննիչ քրեական դատարանի շենքից առգրավել են համակարգիչներ:

Փաստաբանների ահազանգերից պարզ է դարձել, որ Վերաքննիչ քրեական դատարանում գործերի բաշխումը չի կատարվում հատուկ համակարգչային ծրագրի միջոցով:

Հաշվի առնելով, որ հատուկ համակարգչային ծրագրի միջոցով գործերի բաշխման հիմքում դրված պատահական ընտրության սկզբունքը երաշխավորում է դատավորների անկախությունը, ինչպես նաև դատավարության կողմերի՝ արդար դատաքննության իրավունքը,

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը դիմել է ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահին, որպեսզի գրավոր պարզաբանում տրամադրվի, թե՝

1. ի՞նչ հիմքերով են առգրավվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի համակարգիչները.
2. արդյո՞ք այդ առգրավման փաստը գնահատվել է, որպես անհաղթահարելի ուժի ազդեցություն, և արդյո՞ք ստացվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահի՝ ՀՀ դատական օրենսգրքի 41-րդ հոդվածի 5րդ մասով նախատեսված տեղեկացումը.

3. ՀՀ դատական օրենսգրքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով Բարձրագույն դատական խորհուրդը քննարկե՞լ է արդյոք պատճառները և դրանց վերացման ուղղությամբ կատարման համար ի՞նչ պարտադիր ցուցումներ է տվել դատական դեպարտամենտին.

4. արդյո՞ք հնարավոր չէ նոր համակարգչում ներբեռնել գործերի բաշխման համակարգչային ծրագիր և ի՞նչ ժամկետում եք նախատեսում վերականգնել հատուկ համակարգչային ծրագրի միջոցով գործերի բաշխման բնականոն աշխատանքը:

# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

### ***Փաստաբանների վերապատրաստման համակարգի շարունակական զարգացում.***

Փաստաբանների պալատում շարունակաբար կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ: Փաստաբանների պալատում գործում է փաստաբանների վերապատրաստման երեք հարթակ՝ վերապատրաստման դասընթացներ տեղում՝ Փաստաբանների պալատում կամ Փաստաբանական դպրոցում, հեռավար և առցանց (online) վերապատրաստում:




Յուրաքանչյուր ամսվա վերջում Փաստաբանների պալատի կայքէջում հրապարակվում և փաստաբաններին էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվում է հաջորդ ամսվա համար փաստաբանների վերապատրաստման դասընթացների ժամանակացույցը:

2021 թվականի ընթացքում վերապատրաստման դասընթացները կազմակերպվել են ինչպես առկա, այնպես էլ հեռավար եղանակով:

Այդ ընթացքում փաստաբաններն օգտվել են նաև վերապատրաստման առցանց հարթակից:

2021 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, տեղի է ունեցել **վերապատրաստման 108 անվճար դասընթաց՝** ներառյալ հեռավար և առցանց վերապատրաստման դասընթացները, ինչպես նաև ակումբի նիստերը և Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված հաստատությունների կողմից անցկացվող դասընթացները: Դասընթացներին մասնակցել են 1000 փաստաբաններ:

* * *

***Փաստաբանների վերապատրաստման ծրագրերի պարբերական արդիականացում՝ հաշվի առնելով նաև փաստաբանների պահանջմունքները.***

Յուրաքանչյուր կիսամյակի համար Փաստաբանների պալատի նախագահի

համապատասխան որոշումներով հաստատվում են շուրջ 200 վերապատրաստման թեմաներ, որոնք առանձնացված են ըստ իրավունքի տարբեր ճյուղերի՝ քրեական, քաղաքացիական, վարչական և միջազգային իրավունք, ինչպես նաև գիտագործնական և այլ ուղղվածություններին (օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ, ներդրումային ոլորտ, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը փաստաբանական գործունեության մեջ, զինծառայողների և, նրանց ընտանքի անդամների իրավունքներ, էլեկտրոնային կառավարման գործիքները, անչափահասների իրավունքների պաշտպանության քրեաիրավական ասպեկտները, անհաղթահարելի ուժը քաղաքացիաիրավական հարաբերություններում և այլն):

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փաստաբանների վերապատրաստման համար հաստատված թեմաների գերակշիռ մեծամասնությունը ընտրված են հենց փաստաբանների կողմից ներկայացված առաջարկներից:

### ***Վերապատրաստման դասընթացների անցկացում Փաստաբանների պալատի կողմից հավատարմագրված կազմակերպությունների միջոցով.***

Փաստաբանների պալատից և Փաստաբանական դպրոցից բացի՝ փաստաբաններին վերապատրաստելու իրավունք է նախատեսվել նաև Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված այլ կազմակերպությունների համար:

Փաստաբանների պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/7-Լ որոշմամբ հաստատվել է «Փաստաբանների վերապատրաստում իրականացնող հաստատությունների հավատարմագրման» կարգը, որով նախատեսվել են վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու համար կազմակերպություններին հավատարմագիր տալու հստակ չափանիշներ:

Նշված կարգի համաձայն 2021 թվականին փաստաբանների վերապատրաստումը կազմակերպելու համար հավատարմագրվել են հետևյալ կազմակերպությունները.

- ***«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն.***
- ***Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամ (IRZ).***
- ***«Իրավունքների պաշտպանության նախաձեռնություն» հիմնադրամ.***

- ***«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամ.***
- ***«Մտավոր սեփականության իրավունքի կենտրոն» հիմնադրամ***
- ***Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ.***
- ***Միացյալ ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակ.***
- ***Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ/UNICEF).***
- ***«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն.***

2021 թվականին Փաստաբանների պալատի կողմից հավատարմագրված կազմակերպությունների կողմից փաստաբանների համար կազմակերպվել է շուրջ 10 վերապատրաստման դասընթաց:

### ***Հեռավար (դիստանցիոն) և առցանց ուսուցման ձևով վերապատրաստում անցնելու հնարավորություն.***

2021թ.-ի վերապատրաստման դասընթացների մեծ մասն անցկացվել է առկա և հեռավար տարբերակով, որի արդյունքում կազմակերպվել է շուրջ 80 հեռավար դասընթացներ:

Առցանց հարթակում տեղադրվել է 4 նոր վերապատրաստման տեսադասեր:

### ***ՀՀ փաստաբանների պալատի, Եվրոպական միության և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հետ համագործակցությամբ «ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրք» թեմայով վերապատրաստումներ***

2021 թվականին Փաստաբանների պալատի և Եվրոպական միության և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հետ համատեղ անցկացրել է «ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրք», «Փաստաբանների մարտահրավերները կոռուպցիայի դեմ պայքարում», «ՄԻԵԿ, անհատական դիմումների ընդունելիությունը և դատարանի կանոնակարգը» թեմաներով վերապատրաստման դասընթացներ, որն էլ շարունակվել է մինչև 2022 թվականի ապրիլ ամիսը ներառյալ:

Դասընթացների նպատակն է եղել Հայաստանում արդարադատության որակի բարելավման համատեքստում բացահայտել քրեադատավարական նոր

կարգավորումները և դրանց առանձնահատկությունները փաստաբանների (հանրային պաշտպանների) համար:

2021 թվականին տեղի են ունեցել վերը նշված թեմաներով 30-ից ավել վերապատրաստման դասընթացներ, որի շրջանակում մասնակցել են շուրջ 1400 փաստաբաններ (պետք է նկատի ունենալ, որ մի փաստաբանը կարող է մասնակցած լինել մի քանի վերապատրաստման դասընթացի):

Դասընթացները վարել են փաստաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հրայր Ղուկասյանը, ծրագրի հակակոռուպցիոն և էթիկայի հարցերի փորձագետ Դիանա Կուրպնիցեն, ինչպես նաև դասընթացներին մասնակցում էր միջազգային փորձագետ Օթիլիա Պակուրարին:

## ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

Փաստաբանների պալատի միջազգային համագործակցությունը 2021թ-ին ընդլայնվել է առավելապես հեռավար ձևաչափով:



- ✓ Փաստաբանների միջազգային միության (UIA) հրավերով Փաստաբանների պալատի ներկայացուցիչը մասնակցել է 2021 թվականի փետրվարի 10-ին կազմակերպված վեբ-սեմինարներին:
- ✓ Ավստրիայի փաստաբանների պալատի հրավերով Փաստաբանների պալատի ներկայացուցիչը 2021 թվականի փետրվարի 12-ին մասնակցել է «Իրավունքի և ժողովրդավարության՝ քաղաքականության և պրակտիկայի միջև բացերը փակելու մասին» առցանց կոնֆերանսին:
- ✓ Հայ-գերմանական իրավաբանական միության հրավերով

Փաստաբանների պալատի ներկայացուցիչը մասնակցել է 2021 թվականի փետրվարի 13-ին կազմակերպված հանդիպմանը մասնակցելու և հանդես եկել զեկույցով:

- ✓ Եվրոպայի խորհրդի գրասենյակի հրավերով Փաստաբանների պալատի ներկայացուցիչը 2021 թվականի փետրվարի 24-ին մասնակցել է Հայաստանի պրոբացիոն գործակալների համար օժանդակ նյութերի և վերանայված ուսուցման ձեռնարկի ներկայացման թեմայով աշխատաժողովին:
- ✓ Փաստաբանների միջազգային միությունից (UIA) հրավերով Փաստաբանների պալատի ներկայացուցիչը մասնակցել է 2021 թվականի մարտի 8-ին կազմակերպված վեբինարին:
- ✓ Համաշխարհային բանկի Հայաստանյան գրասենյակի հրավերով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի տասը ներկայացուցիչներ մասնակցել են 2021 թվականի մարտի 18-ին հրավիրված տեխնիկական քննարկում/աշխատաժողովին:
- ✓ Ռուսաստանի ֆեդերացիայի փաստաբանների ֆեդերալ պալատից հրավերով Փաստաբանների պալատի ներկայացուցիչը մասնակցել է 2021թ. ապրիլի 8-ին կազմակերպված «Սոցիալ-տնտեսական զարգացումը և իրավունքի միջավայրի որակը» խորագրով միջոցառմանը:
- ✓ 2021 թվականի ապրիլի 14-ին Փաստաբանների պալատը մասնակցել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի (Europian Union and Council of Europe) կողմից «Գործընկերություն հանուն լավ կառավարման «Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության և արհետսավարժության ամրապնդումը»» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում կազմակերպված առցանց հանդիպմանը:
- ✓ Բելառուսի փաստաբանների հանրապետական կոլեգիայի հետ 2021 թվականի փետրվարի 22-ին կնքված համաձայնագրով անորոշ ժամկետով երկարաձգվել է դեռևս 2014 թվականի ապրիլի 23-ին կնքված փոխըմբռնման հուշագրի ժամկետը:
- ✓ Փաստաբանների միջազգային միությունից (UIA) հրավերով Փաստաբանների պալատի ներկայացուցիչը 2021թ. ապրիլի 26-ին մասնակցել է կանանց հանձնաժողովի աշխատանքային խմբի առաջին հանդիպմանը:
- ✓ Փաստաբանների Եվրոպական ասոցիացիայից հրավերով Փաստաբանների պալատի ներկայացուցիչը 2021 թվականի մայիսի 12-ին մասնակցել է Իրավաբանների եվրոպական միության կողմից կազմակերպված «Իրավաբանների անկախությունը՝ առկա մարտահրավերներ»

խորագրով գիտաժողովին: Գիտաժողովին մասնակցել են տարբեր պետությունների փաստաբանական համայնքներից շուրջ 138 ներկայացուցիչներ: ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը հանդես է եկել որպես զեկուցող անդամ՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեության երաշխիքները, ինչպես նաև անդրադառնալով առկա մարտահրավերներին (*Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում, ներկայացվում է մեկ օրինակ՝* https://www.advocates.am/news/view/2850.html )

- ✓ 2021 թվականի մայիսի 25-ին Պալատը մասնակցել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի (European Union and Council of Europe) կողմից «Գործընկերություն հանուն լավ կառավարման «Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության և արհեստավարժության ամրապնդումը»» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում կազմակերպված «Գենդերային հավասարությունը Հայաստանի դատական համակարգում. մարտահրավերներ և հնարավորություններ» թեմայով կլոր սեղան-քննարկմանը:
- ✓ 2021 թվականի հուլիսի 20-ին Պալատի նախագահի առաջին տեղակալը դարձել է Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի (CCBE) «Փոխանակման, համագործակցության և իրազեկման հարթակ» (PECO) կոմիտեի անդամ:
- ✓ Ամերիկյան իրավաբանների ասոցիացիայից (ABA) հրավերով Փաստաբանների պալատի ներկայացուցիչը 2021թ. օգոստոսի 4-ին մասնակցել է միջազգային փաստաբանների պալատաների և կազմակերպությունների ղեկավարների կլոր-սեղան քննարկամանը,
- ✓ 2021 թվականի օգոստոսի 26-ին Պալատը զեկույցով մասնակցել է «Փոխանակման, համագործակցության և իրազեկման հարթակ» (PECO) կոմիտեի կողմից կազմակերպված առցանց նիստին:
- ✓ 2021 թվականի հոկտեմբերի 6-ին Փաստաբանների պալատի և ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում տեղի է ունեցել հերթական քննարկում-հանդիպումը (*Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝* https://www.advocates.am/news/view/2961.html ):
- ✓ 2021 թվականի հոկտեմբերի 11-ին ՀՀ փաստաբանների պալատը հյուրընկալել էր Միջազգային Պաշտպանության Կենտրոն(CPI) միջազգային

իրավապաշտպան կազմակերպության պատվիրակությանը, որը գլխավորում էր Կենտրոնի տնօրեն Կարիննա Մոսկալենկոն:



*(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ [https://www.advocates.am/news/view/2966.html](https://www.advocates.am/news/view/2966.html) ):*

✓ 2021 թվականի հոկտեմբերի 12-ին և 13-ին ՀՀ փաստաբանների պալատի նորընտիր նախագահ Սիմոն Ալբերտի Բաբայանը և ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարը մասնակցել են Ռուսաստանի Դաշնության փաստաբանների ֆեդրալ պալատի կողմից կազմակերպված «Փաստաբանություն. Պետություն. Հասարակություն» խորագրով միջազգային գիտագործնական կոնֆերանսին:Կոնֆերանսում ելույթով հանդես է եկել ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը՝ ներկայացնելով ՀՀ փաստաբանական ինստիտուտի ձեռքբերումները և առկա խնդիրները *(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ [https://www.advocates.am/news/view/2970.html](https://www.advocates.am/news/view/2970.html)):*

✓ Փաստաբանների միջազգային միությունը (UIA) փոխնախագահի 2021 թվականի հոկտեմբերի 27-ին տեղի ունենալիք ընտրությունների Փաստաբանների պալատն առաջադրել է իր թեկնածուին՝ Փաստաբանանների պալատի նախագահի առաջին տեղակալ, Պալատի խորհրդի անդամ, գիտությունների թեկնածու, փաստաբան Մանե Կարապետյանի թեկնածությունը:

✓ 2021 թվականի նոյեմբերի 16-ին Պալատը զեկույցով մասնակցել է «Փոխանակման, համագործակցության և իրազեկման հարթակ» (PECO) կոմիտեի կողմից կազմակերպված առցանց նիստին:

✓ 2021 թվականի նոյեմբերի 25-ին. Փաստաբանների պալատում տեղի է ունեցել հանդիպում ԱՄՆ դեսպանության ներկայացուցիչների՝ Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության ծրագրի տնօրեն Ալեքսիս Հաֆթվանիի և Հայաստանում ԱՄՆ դեսպանատան քրեական արդարադատության բարեփոխումների ծրագրերի ղեկավար Քրիստինա Աֆոյանի հետ *(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3001.html )*:

✓ 2021 թվականի դեկտեմբերի 6-ին Պալատը մասնակցել է «Փոխանակման, համագործակցության և իրազեկման հարթակ» (PECO) կոմիտեի կողմից կազմակերպված առցանց նիստին, որտեղ քննարկվել է դատավորների և փաստաբանների վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցը:

✓ 2021 թվականի դեկտեմբերի 6-ին ՀՀ փաստաբանների պալատը ընդունել է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարության մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության համագործակցության ծրագրերի բաժնի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վարչության պատվիրակությանը:



*(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3013.html):*

✓ 2021 թվականի դեկտեմբերի 9-ին Պալատը զեկույցով մասնակցել է «Փոխանակման, համագործակցության և իրազեկման հարթակ» (PECO) կոմիտեի կողմից կազմակերպված առցանց նիստին, որտեղ ներկայացվել է ՀՀ

փաստաբանական ինստիտուտի գործող իրավիճակը (օրենսդրական բարեփոխումների համատեքստում):

- ✓ 2021 թվականի դեկտեմբերի 15-ին Պալատը մասնակցել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի (Europian Union and Council of Europe) կողմից «Գործընկերություն հանուն լավ կառավարման «Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության և արհետսավարժության ամրապնդումը»» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում կազմակերպված հեռթական առցանց նիստին: Մասնակից պետություններ՝ Հայաստան, Բելառուս, Մոլդովա, Վրաստան և Ուկրաինա:
- ✓ 2021 թվականի դեկտեմբերի 22-ին Պալատը մասնակցել է Անգլիայի փաստաբան, փորձագետ պարոն Ստեֆան Մասոնի «Էլեկտրոնային ապացույցների կիրառությունը դատավարություններում» առցանց միջազգային կոնֆերանսին:
- ✓ 2021 թվականի դեկտեմբերի 23-ին Պալատը մասնակցել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի (Europian Union and Council of Europe) կողմից «Գործընկերություն հանուն լավ կառավարման «Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության և արհետսավարժության ամրապնդումը»» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում կազմակերպված առցանց նիստին, որտեղ քննարկվել է Վերոնիկա Հորերի և Ռոման Զավրեսկի «Մուտք դեպի փաստաբանի մասնագիտություն և ուսումնառության գործընթացը» թեմայով ամփոփ համեմատական զեկույցները:

## ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ ՀՀ ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի հրավերով Փաստաբանների պալատի ներկայացուցիչը 2023 թվականի հունվարի 22-ից 24-ը, հունվարի 29-ից 31-ը, փետրվարի 29-21-ին, ապրիլի 16-18-ին, ապրիլի 30-ից մայիսի 2-ը, մայիսի 7-9 մասնակցել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարո-ության օրենսգրքի նախագծի արտագնա աշխատանքային քննարկումներին:

- ✓ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հրավերով Փաստաբանների պալատի ներկայացուցիչը մասնակցել է էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի մշակման և ներդրման գործընթացին:
- ✓ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հետ ծավալվող արդյունավետ համագործակցության շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Փաստաբանների պալատը հավաքագրել և տրամադրել է փաստաբանական գործունեության շրջանակներում մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող դեպքերի վերաբերյալ տեղեկություն: Մասնավորապես հավաքագրվել են փաստական տվյալներ և գործանական իրավիճակների օրինակներ, որոնք պետք է ապահովեն Մարդու իրավունքների պաշտպանի կողմից վիճարկման համար ուսումնասիրվող մի շարք օրենսդրական կարգավորումների հակասահմանադրականության հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը:
- ✓ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հրավերով Հանրային պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչն առցանց հանդիպում է ունեցել ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ իրականացվող՝ անվճար իրավաբանական օգնություն ոլորտին ուղղված ծրագրի փորձագետների հետ, ներկայացրել առկա իրավիճակը և կարիքները:
- ✓ ՀՀ ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի հրավերով Փաստաբանների պալատի ներկայացուցիչը 2023 թվականի փետրվարի 26-ից 28-ը մասնակցել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախագծի արտագնա աշխատանքային քննարկումներին:
- ✓ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հրավերով Փաստաբանների պալատի ներկայացուցիչը 2021 թվականի մարտի 1-ին մասնակցել է «Գումարի բռնագանձման մեխանիզմների կիրառման հիմնախնդիրները» թեմայով քննարկմանը:
- ✓ Փաստաբանների պալատի ներկայացուցիչը մասնակցել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի 5-րդ նիստին:
- ✓ ՀՀ արդարադատության նախարարության հարցմանն ի պատասխան՝ Փաստաբանների պալատի փորձագիտական խումբը դիրքորոշում է ներկայացրել Վարձակալության պայմանագրային հարաբերությունների վերաբերյալ նախարարության կողմից բարձրացված խնդրահարույց հարցերի մասին:

✓ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ տեղեկություններ են տրամադրվել այն գործնական իրավիճակների վերաբերյալ, որոնք վերաբերվում են օտարերկրյա դատարանի կողմից կիրառված հայցի ապահովման մասին որոշումներին:

✓ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի գրասենյակի հրավերով Փաստաբանների պալատի ներկայացուցիչները 2021 մարտի 31-ին և ապրիլի 1-ին մասնակցել են Եվրոպական դատարանի կողմից Եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների խախտման հիմքով գործերի վերաբացմանը և դրանց առնչությամբ առաջացող պրակտիկ հիմնական խնդիրների վերաբերյալ սեմինարին:

✓ Փաստաբանների պալատի երկու ներկայացուցիչ ներկա են գտնվել դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացվելիք որակավորման գրավոր քննություններին և հարցազրույցներին:

✓ ՀՀ արդարադատության նախարարի հրավերով Փաստաբանների պալատի ներկայացուցիչը 2021 թվականի սեպտեմբերի 8-ին մասնակցել է Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգային ուղղությունների վերաբերյալ կազմակերպվող քննարկմանը:

✓ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հրավերով 2021 թվականի նոյեմբերի 12-ին Փաստաբաններրի պալատի ներկայացուցիչը մասնակցել է «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովումն ազատությունից զրկման վայրերում» խորագրով կլոր սեղան քննարկմանը:

✓ ՀՀ փաստաբանների պալատի նախագահը և նախագահի առաջին տեղակալը 2021 թվականի նոյեմբերի 22-ին մասնակցել են ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի կողմից նախաձեռնած «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի նախագծի քննարկմանը (*Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/2999.html*):

✓ ՀՀ Արդարադատության ակադեմիայի հրավերով Փաստաբանների պալատի նախագահը 2021 թվականի դեկտեմբերի 17-ին մասնակցել է եվրոպական միության և միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հետ համատեղ իրականացնող ծրագրի շրջանակներում համագործակցության արդյունքների վերաբերյալ միջոցառմանը:

## ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿՈՉՈՎ ԴԻՄԵԼ Է ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

2021 թվականի մարտի 5-ին Փաստաբանների պալատի խորհուրդը

***մտահոգ լինելով*** Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական մարմինների (վարչապետ, Զինված ուժերի շտաբ) միջև տեղի ունեցող վեճով և դրա զարգացման ոչ կառուցողական բնույթով,

***արձանագրելով*** սահմանադրական մարմինների միջև վեճերը Սահմանադրական դատարանի միջոցով լուծելու անհրաժեշտությունը,

***հաշվի առնելով այն,*** որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ Հանրապետության նախագահն օժտված է հատուկ լիազորություններով, այդ թվում՝ օժտված է սահմանադրական որոշ մարմինների միջև առաջացած վեճերը Սահմանադրական դատարանին փոխանցելու լիազորությամբ, որոնք իրականացնելիս նախագահը պետք է առաջնորդվի բացառապես համապետական և համազգային շահերով,

***հիմք ընդունելով*** Հանրապետության նախագահի 27.02.2021թ. հայտարարությունը, որով Զինված ուժերի շտաբի պետին ազատելու մասին վարչապետի առաջարկությունը առարկություններով վերադարձվել է՝ այն որակելով որպես Սահմանադրությանն առերևույթ հակասող,

***նկատի ունենալով այն,*** որ Հանրապետության նախագահի կողմից անգործություն դրսևորվելու պայմաններում, հնարավոր են հակասահմանադրական զարգացումներ, ինչի պատասխանատվությունը կրելու է նաև Հանրապետության նախագահը,

***հիմք ընդունելով*** «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի և «Զինվորական ծառայության և զինծառայողի

կարգավիճակի մասին» օրենքի 35.1-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որոնց համաձայն Հանրապետության նախագահը դեռևս կարող է դիմել Սահմանադրական դատարան,

**կոչով դիմել է Հանրապետության Նախագահին**, որ վերջինս դիմիՀայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան՝ Զինված ուժերի շտաբին պետին ազատելու վերաբերյալ վարչապետի առաջարկությունը Սահմանադրությանը հակասող ճանաչելու պահանջով:

Փաստաբանների պալատի խորհուրդը նաև նշել է, որ Նախագահն այս քայլով կձևավորի սահմանադրական մարմինների միջև վեճերը Սահմանադրական դատարանում քննության ներկայացնելու մշակույթ:

## ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԻՐ ԶՈՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԱՅՏՆԵԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ

Փաստաբանների պալատն իր խորը մտահոգությունն է հայտնել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին պետական բյուջեից հատկացվող միջոցների վերաբերյալ կարգավորումները փոփոխության ենթարկելու ՀՀ կառավարության 2021 թվականի նախաձեռնության կապակցությամբ:

Պալատն արձանագրել է, որ այդ կարգավորումները Մարդու իրավունքների պաշտպանի անկախ և արդյունավետ գործունեության կարևոր երաշխիք են: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին հատկացվող միջոցների չափն առանց որևէ սահմանափակման պետական այլ մարմինների հայեցողությամբ պայմանավորելը վտանգում է այդ երաշխիքները:

Պալատի հայտարարության մեջ նշվել է, որ հաշվի առնելով Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գործառութային առանձնահատկությունները և առանձնակի դերն անձանց իրավունքների պաշտպանության գործում՝ առաջարկվող փոփոխությունները հղի են ՄԻՊ-ի՝ որպես սահմանադրական մարմնի, և ՄԻՊ աշխատակազմի բնականոն աշխատանքի խաթարմանը, ինչը կարող է, որպես հետևանք հանգեցնել երկրում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի վատթարացմանը:

Պալատը իր մտահոգությունն է հայտնել փոփոխությունների նախաձեռնումը խտրական վերաբերմունքի հիմքով, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի՝ պետական մարմինների համար անբարեհաճ գործունեությամբ պայմանավորված լինելու մասին տեղեկությունների առնչությամբ:

Ի թիվս այլոց, Պալատը բարձր գնահատականի է արժանացրել Մարդու իրավունքների պաշտպանի հետևողական գործունեությունը միջազգային հարթակներում՝ քաղաքացիների իրավունքների պաշտպանության հարցերը բարձրաձայնելու և առաջ մղելու հարցում, ինչն առավել կարևոր նշանակություն ստացավ 2021 թվականին Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողությունների ողջ ընթացքում և դրանից հետո:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության միջամտությունը կամ դրա համար անհամաչափ սահմանափակումներ ստեղծելը կարող է բացասական անդրադառնալ ինչպես երկրում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի վրա, Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գործունեությանը միջազգային հարթակներում, այնպես էլ՝ Հայաստանի Հանրապետության վարկին արտաքին աշխարհում:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը իր զորակցություն է հայտնել Մարդու իրավունքների պաշտպանին և առաջարկել ՀՀ գործադիր իշխանությանը՝ առկա մտահոգությունների հաշվառմամբ վերանայել ՄԻՊ վերաբերյալ բացասական դիրքորոշումը (վերաբերմունքը) և չեղարկել քննադատության առարկա օրենսդրական նախաձեռնությունը:

### *ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՅՑԸ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ*

ՀՀ արդարադատության նորանշանակ նախարար Կարեն Անդրեասյանը սեպտեմբերի 1-ին այցելել է Փաստաբանների պալատ և հանդիպել պալատի նախագահի, Խորհրդի անդամներին և Պալատի այլ ներկայացուցիչներին:

Քննարկման առանցքում սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտության հարցի քննարկումն էր երկու հիմնական ուղղություններով՝ կառավարման ձևի փոփոխությունը և Գերագույն դատարանի ստեղծման միջոցով բարձրագույն դատական ատյանների միավորման նպատակահարմա-րություններն ու հնարավորությունը:




*(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում, ներկայացվում է մեկ օրինակ https://www.advocates.am/news/view/2915.html )*

# ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ

2021 թվականի ընթացքում ՀՀ փաստաբանների պալատի փորձագիտական խումբը գրավոր եզրակացություններ և դիրքորոշումներ է ներկայացրել հետևյալ նախագծերի և իրավական փաստաթղթերի վերաբերյալ՝

✓ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ,

✓ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ սահմանադրական օրենքի, «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ

և լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ,

- «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ,
- ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմված «Քրեական գործերով խափանման միջոց կիրառելու հիմքերի, խափանման միջոց կիրառելու կարգի, կալանավորման, կալանքի տակ պահելու ժամկետի վերաբերյալ» ուղեցույց,
- ««Հաշտարարության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ,
- «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

# ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՑԱՌՈՒՄՆԵՐ

2021 թվականի ընթացքում Փաստաբանների պալատը կազմակերպել է հետևյալ մարզամշակությայի միջոցառումները.

## ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՖՈՒՏԶԱԼԻ ԳԱՎԱԹ 2021

Փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը 2021 թվականի կազմակերպել է **«Փաստաբանների ֆուտզալի գավաթ 2021»** մրցաշար: Այն իրականացվել է մի քանի փուլերով: Խմբային խաղերի արդյունքներով երկու խմբերի առաջատարները հանդիպել են եզրափակիչ խաղերում և չափել իրենց ուժերը մրցանակային տեղերի համար: Եզրափակիչ խաղերը և մրցանակաբաշխությունը տեղի է ունեցել հունիսի 13-ին:

Հաղթող թիմերը պարգևատրվել են գավաթներով, իսկ թիմերի անդամները՝ մեդալներով և պատվոգրերով:

Տավուշի մարզում գործող փաստաբաններից կազմված «Տավուշ» թիմը մրցաշարին ակտիվ մասնակցության համար պարգևատրվեց հուշագավաթով, մրցաշարում հաղթող չճանաչված բոլոր թիմերի անդամները պարգևատրվեցին հավաստագրերով:

Մրցաշարի ընթացքում լավագույնս դրսևորած մասնակիցներից կազմվել է փաստաբանների հավաքականը՝ մինի ֆուտբոլի տարբեր մրցաշարերին մասնակցության և այլ կազմակերպությունների հետ մրցակցության նպատակով:

## ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ ԳԱՎԱԹ 2021

Փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը 2021 թվականի մայիսի 27-ին կազմակերպել է **«Փաստաբանների շախմատի գավաթ 2021»** մրցաշար:

Շախմատի մրցաշարին մասնակցել Փաստաբանների պալատի փաստաբանները (արտոնագրի գործողությունը չկասեցրած) և «Փաստաբանական դպրոցի» ունկնդիրները: Ընդհանուր առմամբ մրցույթին մասնակցել է 35 փաստաբան և ունկնդիր:

Մրցաշարի արդյունքներով 1-ից 4-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները պարգևատրվել են պատվոգրերով և մեդալներով:

Մրցաշարից հետո լավագույն խաղացողներից ձևավորվել է Փաստաբանների պալատի շախմատի հավաքական թիմը, որը 2021 թվականի **մայիսի 29-ին**՝ մասնակցել է Հայաստանի շախմատի ֆեդերացիայի և ակադեմիայի կողմից կազմակերպված **Հայաստանի կորպորացիաների միջև անց կացվող գրան-պրի մրցաշարին**:

## ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ ԳՐԱՆ-ՊՐԻ ՄՐՑԱՇԱՐ

2021 թվականի մայիսի 29-ին Հայաստանի շախմատի ֆեդերացիայի և ակադեմիայի կողմից կազմակերպված Հայաստանի կորպորացիաների միջև անց է կացվել ՀՀ կորպորացիաների շախմատի Գրան-Պրի մրցաշար, որին մասնակցել են նաև ՀՀ փաստաբանների պալատի շախմատի հավաքականի երկու թիմերը:

Շախմատի Գրան-Պրի մրցաշարի 1-ին փուլի հաղթող են ճանաչվել ՀՀ փաստաբանների պալատի շախմատի հավաքական թիմերը՝ զբաղեցնելով առաջին և երկրորդ տեղերը:

(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում, https://www.advocates.am/news/view/2863.html )

2021 թ-ի սեպտեմբերի 18-ին Հայաստանի շախմատի ակադեմիայում տեղի է ունեցել կորպորացիաների շախմատի Գրան-Պրի մրցաշարի երկրորդ փուլը:

Խաղին մասնակցել են նաև Փաստաբանների պալատի հավաքական թիմերը: Մրցաշարի արդյունքներով փաստաբանների թիմերը զբաղեցրել են պատվավոր հորիզոնականներ

*(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/2937.html* )

# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

## ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2021 թվականի ընթացքում իր ակտիվ գործունեությունն է շարունակել Փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը:

2011 թվականից սկսած գիտավերլուծական կենտրոնը Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի հետ ունեցած պայմանավորվածության համաձայն սահմանադրական դատարանում քննվող գործերով որպես երրորդ կողմի կարծիք (amicus curiae) ներկայացնում է իր գրավոր մեկնաբանությունը՝ վիճարկվող նորմերի սահմանադրականության վերաբերյալ:

2021 թվականի ընթացքում ՀՀ սահմանադրական դատարանին **25 գործով** Փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը տրամադրել է գրավոր մեկնաբանություն:

2021 թվականին նաև փոփոխություններ են կատարվել «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնի կանոնակարգում»: Կատարված փոփոխությամբ հստակեցվել է գիտավերլուծական կենտրոնի կարծիք Պալատի խորհրդին ներկայացվելու և քննարկվելու ընթացակարգը, ինչպես նաև վերացվել են Գիտավերլուծական կենտրոնի համակարգողի լիազորությունների ժամկետի սահմանափակումը:

## ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Փաստաբանների պալատի 2021 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատվել է Փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կանոնակարգը, ինչով կատարվել են ծավալուն փոփոխություններ:

Ծավալուն փոփոխությունները պայմանավորված են Փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի **(այսուհետ՝ Երիտասարդական խորհուրդ)** ձևավորման հայեցակարգի վերանայմանը:

Մասնավորապես, Երիտասարդական խորհուրդը կազմված է վեց անդամից և խորհրդի նախագահից, որոնց երկու տարի ժամկետով նշանակում էր Պալատի նախագահը:

Կատարված փոփոխությունների արդյունքում խորհրդի անդամների համալրումն իրականացվում է շրջապտույտային (ռոտացիոն) եղանակով, հիմքում ընդունելով այն հայեցակարգային սկզբունքը, որ խորհուրդը պարբերաբար համալրվի նոր արտոնագիր ստացած փաստաբաններով:

Այսպես, հաշվի առնելով ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից յուրաքանչյուր կիսամյակ շրջանավարտներ տալու հանգամանքը՝ նոր ընթացակարգով ձևավորվող խորհրդի առաջին կազմը համալրվել է վերջին երեք տարում արտոնագիր ստացած փաստաբաններով այնպես, որ ՀՀ փաստաբանական դպրոցի յուրաքանչյուր ուսումնական շրջանի շրջանավարտներից ներկայացված լինի մեկական ներկայացուցիչ: Ըստ Կանոնակարգի՝ հետագայում յուրաքանչյուր ուսումնական շրջանի ավարտից և որակավորման քննություններից հետո՝ որոշ ժամանակ անց, նոր արտոնագիր ստացած փաստաբաններից մեկը պետք է նշանակվի խորհրդի այն անդամի փոխարեն, որն ավելի վաղ ուսումնական շրջանի շրջանավարտ է:

Արդյունքում, խորհրդի յուրաքանչյուր անդամ կգործի երեք տարի ժամկետով (բացառությամբ առաջին կազմի) և խորհուրդը մշտապես կթարմացվի նոր անդամներով:

Նշված համակարգը թույլ է տալիս, որ յուրաքանչյուր ուսումնական շրջանի շրջանավարտներ ունենան իրենց ներկայացուցիչը խորհրդում: Ենթադրվում է, որ այդ ներկայացուցիչը պետք է ընտրվի առավելագույն ակտիվ ունկնդիրներից, ինչի արդյունքում նշված փաստաբանը խորհրդի կողմից կազմակերպվող միջոցառումներին կապահովի իր ուսուցման ժամանակահատվածում սովորած ունկնդիրների մասնակցությունը, իրազեկվածությունը, ինչն էլ իր հերթին կավելացնի խորհրդի կազմակերպած միջոցառումներին փաստաբանների

առավել մեծ քանակի ընդգրկումը, կապահովվի նոր արտոնագրված փաստաբանների մասնակցությունը, ավելի սահուն և արդյունավետ ինտեգրումը (համալրումը) համայնքին:

ՀՀ փաստաբանների պալատի որոշմամբ 2021 թվականին ձևավորվել է Երիտասարդական խորհուրդը նոր կազմով՝ Խորհրդի նախագահ և անդամներ:

Խորհրդի յոթերորդ անդամը նշանակվել է 2021թ. աշնանը կազմակերպվող որակավորման քննությունը հանձնած փաստաբանների կազմից:

Փաստաբանների պալատի նախագահ և նախագահի տեղակալը հանդիպել են երիտասարդ խորհրդի նորանշանակ անդամների հետ:

Հանդիպման ընթացքում պալատի նախագահը խոսելով երիտասարդական խորհրդի նպատակներից հույս է հայտնել, որ խորհրդի անդամները ակտիվ գործունեություն կծավալեն մասնագիտական ոլորտում երիտասարդ փաստաբանների ինտեգրման, նրանց մասնագիտական գործունեության ընթացքում առաջացած խնդիրները վեր հանելու, երիտասարդ փաստաբանների և փաստաբանների համագործակցությանը և շփումներին նպաստելու, այլ երկրներում գործող նմանատիպ կառույցների հետ կապեր հաստատելու ուղղությամբ: Միաժամանակ առաջարկվել է ակումբային եղանակով կազմակերպել փաստաբանների միջև ոչ պաշտոնական շփումները:

Փաստաբանների պալատը շնորհակալություն է հայտնել Երիտասարդական խորհրդի նախորդ կազմին՝ Խորհրդի նախագահ Ռուզաննա Հարությունյանին, Խորհրդի անդամներ Անի Ալավերդյանին, Մարի Ստեփանյանին, Անի Դավթյանին, Աննա Չերքեզյանին, Վահրամ Գալստյանին, Էդիկ Ոսկանյանին, Դիաննա Ղազարյանին (փոխարինել է Անի Դավթյանին) համագործակցության համար:

2021 թվականի դեկտեմբերի 22-ին Երիտասարադական խորհուրդը Փաստաբանների պալատում կազմակերպել է փաստաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Դանիելյանի և երիտասարդ փաստաբանների հանդիպում-քննարկումը:



(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3033.html )

# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

### *ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

2021 թվականի մարտի 6-ին տեղի է ունեցել Փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողովը, որի օրակարգում ընդգրկված է եղել նաև Փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրությունը:

Ընդհանուր ժողովին որպես խորհրդի անդամի թեկնածու էր առաջադրվել 23 փաստաբան: ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամի ընտրությունը կազմակերպվում է վարկանիշային կարգով և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության համաձայն առաջադրված թեկնածուներից կարող են խորհրդի անդամ ընտրվել առավել շատ «կողմ» ձայներ ստացած 12 (տասներկու) թեկնածուները:

Փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովն ամփոփել է «ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրություն» օրակարգային հարցով ընդհանուր ժողովի քվեարկության արդյունքները: Համաձայն հաշվիչ հանձնաժողովի 06.03.2021թ. թիվ 1 արձանագրության՝ ժողովին մասնակցելու իրավունք են ունեցել 2298 փաստաբան, ըստ ընտրական ցուցակի

ստորագրությունների՝ քվեաթերթիկ են ստացել 1147 փաստաբան (Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/2801.html)

Ընտրությունների արդյունքում ձևավորվել է Փաստաբանների պալատի նոր խորհուրդ: Նորընտիր խորհրդի անդամների լիազորությունները սկսվել են 2021 թվականի մարտի 15-ից:

(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/2808.htm)

## ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2021 թվականի սեպտեմբերի 12-ին Փաստաբանների պալատում տեղի են ունեցել փաստաբանների պալատի նախագահի ընտրությունը:

Մինչ ընտրությունները Փաստաբանների պալատը 2021 թվականի սեպտեմբերի 8-ին կազմակերպել է բանավեճ[1], որին մասնակցել են Փաստաբանների պալատի նախագահի թեկնածուներ Սիմոն Բաբայանը և Գևորգ Գյոզալյանը:

Քվեարկությանը մասնակցել են 1111 փաստաբան:

Քվեարկության արդյունքներով Սիմոն Բաբայանի օգտին քվեարկել է 937 փաստաբան, իսկ Գևորգ Գյոզալյանի օգտին՝ 144 փաստաբան: 30 քվեաթերթիկ ճանաչվել է անվավեր:

ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի 12.09.2021թ. որոշմամբ՝ չորս տարի ժամկետով Սիմոն Ալբերտի Բաբայանը համարվել է ընտրված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի պաշտոնում՝ 1111 փաստաբանների 937 կողմ ձայներով (84,3%)

(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում, ներկայացվում է մեկ օրինակ https://www.advocates.am/news/view/2930.html)

2021 թվականի հոկտեմբերի 5-ին Կառավարական տան նիստերի դահլիճում տեղի ունեցել Փաստաբանների պալատի նորընտիր նախագահ Սիմոն Բաբայանի լիազորությունների ստանձնման արարողությունը:

---

[1] Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում https://www.advocates.am/news/view/2926.html



(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝
https://www.advocates.am/news/view/2930.html, https://www.advocates.am/news/view/2957.html )

# ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ

2021 թվականի դեկտեմբերի 6-ին Փաստաբանների պալատը նշել է ՀՀ-ում Փաստաբանության օրը: Միջոցառման ընթացքում փաստաբանական համայնքը համալրող հավակնորդներին շնորհվել է փաստաբանական գործունեության արտոնագիր:



(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3012.html):

# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԿԱԶՄԵԼ Է ՈՒՂԵՑՈՒՅՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ ՀՆԱՐԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ամփոփելով 2020 թվականի և 2021 թվականի սկզբին հավաքարված տվյալները ՀՀ փաստաբանների պալատը կազմել է ուղեցույց 2020 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով տուժած անձանց հնարավոր խնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ:

Ուղեցույցը նախատեսված է զոհված, անհայտ կորած կամ գերեվարված զինծառայողների ընտանիքի անդամների, մարտական գործողությունների

մասնակիցների, այդ թվում՝ վիրավորում ստացած զինծառայողների, տեղահանված անձանց, ինչպես նաև ռազմական գործողությունների հետևանքով տուժած այլ խմբերի անձանց համար:

Ուղեցույցի էլեկտրոնային տարբերակը հրապարակվել է Փաստաբանների պալատի կայքէջում, միաժամանակ, դրա ուղեցույցի տպագրված տարբերակի որոշակի խմբաքանակներով ուղարկվել են ռազմական գործողությունների հետևանքով տուժած անձանց ուղղորդելու և աջակցություն ցուցաբերելու հարցում դերակատարում ունեցող կառույցներին և կազմակերպություններին:

2021 թվականի փետրվարի 16-ին Փաստաբանների պալատում տեղի է ունեցել մամուլի ասուլիս՝ Փաստաբանների պալատի կողմից կազմված «Ռազմական գործողությունների հետևանքով տուժած անձանց հնարավոր խնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ» ուղեցույցի վերաբերյալ:

Ասուլիսի ընթացքում Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը և ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը ներկայացրել են նշված ոլորտի հետ կապված հիմնախնդիրները: (Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/2780.html)

## ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱՎԱՔԱԳՐԵԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՆՁԱԶԵՐԾԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ամփոփելով փաստաբանների, այդ թվում՝ հանրային պաշտպանների կողմից ցուցաբերվող իրավաբանական օգնության շրջանակներում ի հայտ եկած տվյալները, փաստաբանների կողմից բարձրացված խնդիրները և հանրային տիրույթում առկա տեղեկությունները՝ ՀՀ փաստաբանների պալատում կատարված ուսումնասիրությամբ դուրս են բերվել 2020 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության

սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով առաջացած համակարգային մի շարք խնդիրներ:

Բարձրացված խնդիրները տեղեկանքի ձևով ներկայացվել են ՀՀ կառավարությանը: Ի թիվս այլնի՝ ի հայտ են բերվել հետևյալ խնդիրները՝

- Անհայտ բացակայող ճանաչելու դատական գործընթացի բարդություններ, արտադատական լուծման կամ խմբային որոշումների կայացման հնարավորության բացակայություն,
- Անհայտ բացակայող ճանաչելու դիմումների համար պետական տուրքի առկայություն, անվճար իրավաբանական օգնության իրավունքի ուղղակի ամրագրման բացակայություն,
- Զինծառայողների գերեվարման կամ անհայտ կորելու հանգամանքների վերաբերյալ տվյալների ցրվածություն, մի քանի մարմիններում առանձին հավաքվող տվյալներ,
- Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի կողմից հատուցումների տրամադրման գործընթացի դանդաղ ընթացքով պայմանավորված՝ մինչ հատուցում ստանալը զոհված զինծառայողների ընտանիքի անդամներին տրամադրվելիք սոցիալական աջակցության ծրագրերի բացակայություն,
- Մինչ հատուցումն անհայտ կորած զինծառայողների ընտանիքների և լուրջ առողջական խնդիրներ (այդ թվում՝ հաշմանդամություն) ձեռք բերած զինծառայողների համար նախատեսված աջակցության ծրագրերի իրականացման դանդաղ ընթացք,
- Վիրավորում ստացած զինծառայողների հնարավոր հաշմանդամության կարգը որոշելու և սահմանելու գործընթացի տևականություն,
- Վիրավորում ստացած զինծառայողներին անաշխատունակության ընթացքում կամ դրա առնչությամբ սոցիալական աջակցություն նախատեսված չլինելը կամ չտրամադրվելը,
- Գերեվարված լինելու հանգամանքը հաստատված անձանց (զինծառայողների) ընտանիքի անդամների համար սոցիալական աջակցության ծրագրերի բացակայությունը,
- Փաստահավաք համակարգված աշխատանքների բացակայություն,
- Ռազմական գործողությունների մեկնելու առնչությամբ առաջացած իրավական խնդիրներ, այդ թվում՝ տարատեսակ պարտավորությունների առնչությամբ, այս խնդիրը առկա է նաև գերեվարված քաղաքացիական անձանց հարցում,

- Տեղահանված անձանց տրամադրվող աջակցության համակարգվածության բացակայություն,
- Վիրավորված անձանց համար ներառական ծրագրերի բացակայություն,
- Գերեվարված և անհայտ կորած անձանց քանակը չհրապարակելը,
- Միասնական տվյալների շտեմարանների կամ տվյալների փոխանակման հնարավորության բացակայությունը Արցախի և ՀՀ պետական մարմինների միջև բարձրացվել են:

Խնդիրների արձանագրման հետ միասին Փաստաբանների պալատը Կառավարությանն է ներկայացրել նաև դրանց լուծման եղանակների վերաբերյալ գործնական առաջարկությունները:

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՕՐԵՐ

2020 թվականի պատերազմին մեր հայրենակիցների թվում մասնակցել են նաև փաստաբանները և նրանց ընտանիքների անդամները:

Պատերազմը խլել է փաստաբաններ Կարեն Լևոնյանի, Մաի Հակոբյանի և Խաչիկ Դանիելյանի զավակներին՝ Լևոն Կարենի Լևոնյանին, Հրաչիկ Հրանտի Ավետիսյանին և Միքայել Խաչիկի Դանիելյանին:

Փաստաբանների պալատը նպատակ ունենալով գոտեպնդել այն փաստաբաններին, որոնց ընտանիքի անդամները զոհվել են, ինչպես նաև, կարևորելով փաստաբանական համայնքի կողմից հայրենիքի պաշտպանությանը մասնակցած անձանց ընտանիքներին հատուկ ուշադրություն դարձնելու միջոցով օրինակ ծառայելու անհրաժեշտությունը, Փաստաբանների պալատի նախագահի 17.03.2021թ. թիվ 45-Լ որոշմամբ հաստատվել է «Հարգանքի տուրք մատուցելու օրեր ընտրելու» կարգը և կայացվել է 18.05.2021թ. թիվ 92-Ա որոշումը, որի համաձայն յուրաքանչյուր տարվա համար սահմանվել են 2020 թվականի պատերազմի հետևանքով զոհված զավակներ ունեցող փաստաբանների ընտանիքներին հարգանքի տուրք մատուցելու օրեր:

(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում, ներկայացվում է մեկ օրինակ՝ https://www.advocates.am/news/view/2853.html)

Հայրենիքի պաշտպանության համար փաստաբանների ընտանիքների զոհված անդամների հիշատակը հարգելու նպատակով՝ Փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ սահմանված կարգով՝ 2021 թվականի հոկտեմբերի 17-ին հարգանքի տուրք է մատուցվել երեք փաստաբանների՝ Արցախյան 44-օրյա պատերազմում նահատակված որդիների հիշատակին:

Փաստաբանների պալատի մեծ դահլիճում տեղի է ունեցել նրանց մասին պատմող «Չպարտվածները» վավերագրական ֆիլմի ցուցադրությունը (Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/2974.html):

## ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԿՈՉ Է ԱՐԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻՆ ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԳՈՐԾԵՐՈՎ

Հետպատերազմյան խնդիրներով պայմանավորված՝ փաստաբանները, այդ թվում՝ հանրային պաշտպանները, շարունակել են իրավաբանական օգնություն ցուցաբերել քաղաքացիներին ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողներին և քաղաքացիական անձանց անհայտ բացակայող ճանաչելու հարցում՝ նրանց ընտանիքի անդամների համար պետության կողմից սահմանված երաշխիքներից և արտոնություններից օգտվելու հնարավորությունն ապահովելու նպատակով:

Ցավոք, գործնականում 2021 թվականին արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ դատարանները մերժել են քաղաքացիների միջնորդությունները պետական տուրքի վճարման արտոնություն կիրառել նշված գործերով ներկայացված դիմումների համար:

Հատկանշական է, որ դատարանների կողմից մերժվել են նաև հանրային պաշտպանների կողմից ներկայացված միջնորդությունները, մինչդեռ հանրային պաշտպանները, օրենքի համաձայն, անվճար իրավաբանական օգնություն են ցուցաբերում անվճարունակ և պետության հոգածության ներքո գտնվող խմբերի անձանց:

Ներկայացվածով պայմանավորված՝ Փաստաբանների պալատը հրապարակային կոչ է արել բոլոր դատարաններին այսպիսի գործերով պետական տուրքի արտոնություն կիրառելու միջնորդությունները քննարկելիս հաշվի առնել ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների և քաղաքացիական անձանց ընտանիքների մոտ առաջացած հնարավոր նյութական խնդիրները, ինչպես նաև պետության բարոյական և իրավական պարտականությունների առաջնահերթությունները նրանց նկատմամբ:

Միաժամանակ, Փաստաբանների պալատն օրենսդրական նախագծի տեսքով առաջարկ է ներկայացրել Կառավարությանը՝ այսպիսի գործերով

ներկայացվող դիմումների համար պետական տուրքից ազատելու օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու վերաբերյալ:

Նշվածին զուգահեռ, մինչ օրենքում լրացում կատարելու միջոցով հարցի կարգավորումը, Պալատը հրապարակային կոչ է արել Կառավարությանը «Պետական տուրքի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն վճարողի փոխարեն պետական տուրքը վճարելու միջոցով պետական տուրքի գծով արտոնություն սահմանել ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողներին և այլ անձանց անհայտ բացակայող ճանաչելու դիմում ներկայացնող անձանց համար:

## ՀԱՎԱՔՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ԵՆԹԱՐԿՎՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՁԵՎԱՎՈՐՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԽՈՒՄԲ

Հաշվի առնելով հանրային տիրույթում առկա լայնածավալ տեղեկությունները առանձին գործատուների, այդ թվում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր կազմակերպությունների կողմից աշխատողներին 2021 թվականին Երևան քաղաքում կազմակերպվող հավաքներին մասնակցելուն հարկադրելու վերաբերյալ, որոնք ուղեկցվում են նաև աշխատանքից ազատելու սպառնալիքներով, Փաստաբանների պալատում ձևավորվել է փաստաբանների խումբ նշված աշխատողներին իրավաբանական անվճար օգնություն տրամադրելու նպատակով:

## ՀՈՒՆԻՍԻ 1-Ը ՇՈՒՌՆՈՒԽ ԳՅՈՒՂԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ

Ելնելով երկրում տիրող ծանր իրավիճակից, 2021 թվականին երեխաների տոնը Երևանում նշելու փոխարեն, Փաստաբանների պալատը նախընտրել է ներկայացուցիչներ ուղարկել Սյունիքի մարզի Շուռնուխ գյուղ՝ փորձելով ուրախացնել և հաճելի անակնկալ պարգևել թշնամու նշանառության տակ ապրող երեխաներին:

(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում, ներկայացվում է մեկ օրինակ՝ https://www.advocates.am/news/view/2866.html )

# ԱՅԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2021 թվականի ընթացքում ճանաչողական այցի շրջանակներում Փաստաբանների պալատը հյուրընկալել է մի քանի տասնյակ ապագա իրավաբանների՝ աշակերտներ, բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ 10 /տասը/ ուսումնական հաստատություններից

*(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում, ներկայացվում է մեկ օրինակ՝ https://www.advocates.am/news/view/2812.html, https://www.advocates.am/news/view/3034.html):*

## ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ

Փաստաբանների պալատը 2020թ. պատերազմում զոհված, անհետ կորած կամ վիրավորված զինծառայողների ընտանիքի անդամներին անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերած փաստաբաններին խրախուսելու նպատակով 2021 թվականի սեպտեմբերի 6-ին կազմակերպել է միջոցառում:

Միջոցառման ընթացքում Փաստաբանների պալատի նախագահը ողջունել է ներկաներին և փաստաբանների պալատի անունից շնորհակալություն հայտնել 2020թ. պատերազմում զոհված, անհետ կորած կամ վիրավորված զինծառայողների ընտանիքի անդամներին անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերած փաստաբաններին:




*(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում, ներկայացվում է մեկ օրինակ՝ https://www.advocates.am/news/view/2921.html )*

## ՍԵԴՐԱԿ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

2021 թվականի սեպտեմբերի 28-ին Փաստաբանների պալատում տեղի է ունեցել փաստաբան, ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ՝ Սեդրակ Ասատրյանի հիշատակի երեկոն:

Միջոցառման ընթացքում ցուցադրվել է Սեդրակ Ասատրյանի մասին պատմող «Պայքարողը» տեսաֆիլմ:

(Հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/2946.html )

# ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

## 2021 թվականի ընթացքում Փաստաբանների պալատի մասնակցությամբ քննվող քաղաքացիական գործերի մասին համառոտ տեղեկություններ.

| 55 գործ | 0 գործ | 8 գործ | 6 գործ | 4 գործ* | 1 գործ |
|---|---|---|---|---|---|
| Պալատի խորհրդի որոշումներով կարգապահական պատասխանատվության ենթարկված փաստաբանների կողմից Պալատի խորհրդի որոշումների վիճարկում | Պալատի խորհրդի այլ (կարգապահական պատասխանատվության հետ չկապված) որոշումների վիճարկում | Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի որոշումների վիճարկում | Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին Պալատի նախագահի որոշումների վիճարկում | Այլ հարցեր, օրինակ՝ Պալատի նախագահի այլ (կարգապահական պատասխանատվության հետ չկապված) որոշումների վիճարկում, որակավորման քննությունները չհանձնած հավակնորդի կողմից իր մասով որակավորման քննության արդյունքները վիճարկում | Փաստաբանի կողմից չվճարված տուգանքի գումարի բռնագանձման պահանջով գործեր (այդ թվում վճարման կարգադրություն) հայցվոր (դիմող) է հանդիսացել Պալատը: |

| № | Փաստաբանների նկատմամբ 2021 թվականին հարուցված վարույթներ (քանակ) | 2020 | 2021 | տարբեր. թվային արտահայտմամբ | տարբեր. տոկոսային արտահայտմամբ |
|---|---|---|---|---|---|
| | | 180 | 26 | 154 | -85.5% |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **1.** | Փաստաբանների դեմ բողոքների հիման վրա հարուցված վարույթների թիվը | **26** | **26** | **0** | **0%** |
| | | | | | |
| | | | | | |
| **2.** | Անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթների թիվը | **154** | **0** | **154** | **-100%** |
| **3.** | Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված կարգապահական վարույթների թիվը | **0** | **0** | **0** | **-** |

## ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԴԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

| *№* | *1.* | | *2.* | | *1 և 2 սյունակների համեմատական* |
|---|---|---|---|---|---|
| | ***Փաստաբանների դեմ ստացված բողոքների ընդհանուր քանակը այդ թվում՝*** | *178* | ***Փաստաբանների դեմ ներկայացված բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ, այդ թվում՝*** | *26* | 14.6% |
| **1.1** | փաստաբանների վստահորդների և քաղաքացիների բողոքներ | **155** | փաստաբանների վստահորդների և քաղաքացիների բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ | **14** | ***9%*** |
| **1.2** | փաստաբանների բողոքներ փաստաբանների դեմ | **10** | փաստաբանների բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ | **1** | ***10%*** |
| **1.3** | այլ բողոքներ | **13** | այլ բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ | **11** | ***84.6%*** |

2021 թվականի հունվարից դեկտեմբեր (ներառյալ) ամիսների ընթացքում Փաստաբանների պալատում փաստաբանների դեմ ստացվել են ընդհանուրը **178 բողոք**, որոնցից գերակշիռ մասը՝ 155 բողոք ներկայացվել են քաղաքացիների և

կազմակերպությունների կողմից, որոնք հանդիսանում են տվյալ փաստաբանի վստահորդ (այդ թվում՝ նախկին վստահորդ) կամ փաստաբանի վստահորդի հակառակորդ կողմ:

Փաստաբանների դեմ ներկայացված բողոքների և փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումների ընդհանուր վիճակագրական թվերի համեմատական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ փաստաբանների դեմ ներկայացված ընդհանուր **178 բողոքներից կարգապահական վարույթ հարուցվել է ընդամենը 26 բողոքի հիման վրա**, այսինքն՝ փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել է ստացված բողոքների ընդհանուր թվի 14,6%-ը կազմող դեպքերում:

Փաստաբանների վստահորդների և քաղաքացիների բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթները կազմում են փաստաբանների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների ընդհանուր թվի **53.8%-ը:**

Փաստաբանների բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթները կազմում են փաստաբանների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների ընդհանուր թվի **3.8%-ը,** իսկ այլ բողոքների հիման վրա հարուցված կարգապահական վարույթները կազմում են փաստաբանների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների ընդհանուր թվի **42.3%-ը:**

2021 թվականի հունվարից դեկտեմբեր (ներառյալ) ամիսների ընթացքում Փաստաբանների պալատում դատարաններից մուտքագրվել է փաստաբանների նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին 15 գրություն, որոնք ընդունվել են ի գիտություն:

## 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՔՆՆՎԱԾ * ԵՎ ԱՎԱՐՏՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

| **Քննված կարգապահական գործերի ընդհանուր քանակը[1]՝ 178*** | | |
|---|---|---|
| ***Կարճված վարույթներ՝*** ***79 (44.3%)*** ***ադ թվում՝*** | | ***Կարգապահական տույժով ավարտված վարույթներ՝*** ***98 (55%)*** ***այդ թվում՝*** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Բողոքի (սանկցիայի) հիմքով հարուցված և քննված կարգապահական վարույթների քանակը՝ 28, որից** * | | | | |
| ***Բողոքի հիմքով հարուցված վարույթի կարճում*** | 15<br>53.5% | | ***Բողոքի հիմքով հարուցված վարույթով փույժի որոշում*** | 13<br>46.4% |
| **Անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված և քննված կարգապահական վարույթների քանակը՝ 149, որից** | | | | |
| ***Անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված վարույթի կարճում*** *** | 64<br>42.9% | | ***Անդամավճարը չվճարելու հիմքով փույժի որոշում*** | 85<br>57% |
| **Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված և քննված կարգապահական վարույթների քանակը՝ 0, որից** | | | | |
| ***Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված վարույթի կարճում*** | 0<br>- | | ***Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով փույժի որոշում*** | 0<br>- |
| **Խորհրդի կողմից 2020 թվականին վերանայված վարույթներ՝ 0** | | | | |
| ***Վերանայման վարույթներով կարճում*** | 0<br>- | | ***Բողոքի հիմքով հարուցված վարույթով փույժի որոշում*** | 0<br>- |

* 2021թ. Խորհուրդը քննել է և դրանց արդյունքներով կայցրել է 178 որոշում, որոնցից 159 վերաբերում են 2020 թվականին հարուցված կարգապահական գործերին, իսկ 19-ը՝ 2021թ.:

Ընդհանուր թվի մեջ հաշվարկվել է նաև Խորհրդի կողմից 1 կասեցված որոշում.

**կարգապահական վարույթները կարճվել են փաստաբանի նկատմամբ արտոնություն կիրառելու հիմքով (առաջին անգամ հարուցված վարույթի շրջանակներում փաստաբանի կողմից անդամավճարն ամբողջությամբ վճարվելու դեպքում վարույթը կարճվում է).

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

***համեմատական ժամանակահատված՝ 2020 և 2021 թվականներ***

| № | Վիճակագրական տվյալի չափանիշը (համեմատության առարկան) | 2020 | 2021 | տարբերությունը թվային արտահայտմամբ | տարբերությունը տոկոսային արտահայտմամբ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Փաստաբանների պալատի նախագահի որոշումների ընդհանուր թիվը | 429 | 402 | **- 27** | **- 6.3 %** |
| 2 | Փաստաբանների պալատի նախագահի հրամանների ընդհանուր թիվը | 335 | 403 | **68** | **20.3 %** |

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

***համեմատական ժամանակահատված՝ 2020 և 2021 թվականներ***

| № | Վիճակագրական տվյալի չափանիշը (համեմատության առարկան) | 2020 | 2021 | տարբերությունը թվային արտահայտմամբ | տարբերությունը տոկոսային արտահայտմամբ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մտից փաստաթղթերի ընդհանուր թիվը | 2993 | 3214 | **221** | **7.3%** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **2** | Ելից փաստաթղթերի ընդհանուր թիվը՝ ներառյալ կարգապահական գործերով | 2007 | 2338 | **331** | **16.4%** |

## ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

| *№* | *Վիճակագրական փվյալի չափանիշը* | *Վիճակագրական փվյալը* |
|---|---|---|
| **1** | Խորհրդի ընթացիկ նիստերի քանակը | **21** |
| **4** | Խորհրդի կարգապահական գործերով կայացած նիստերի քանակը | **301** |
| **5** | Կարգապահական գործերով խորհրդի որոշումների ընդհանուր քանակը | **178** |

## ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԱՐԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում վարած քրեական գործերի թիվը կազմել է 10492, դրանցում ներառված են նաև քաղաքացիների դիմումների հիման վրա տրամադրված բանավոր, գրավոր խորհրդատվությունները և քրեական գործերի շրջանակներում ներկայացուցչությունները:

2021թ. ստացված դիմումների քանակը ըստ խմբերի

| N° | Կատեգորիայի անվանումը | «Փաստաբանության մասին» օրենքի համապատասխան հոդվածը, մասը, կետը | Դիմումներ թիվը |
|---|---|---|---|
| **1** | Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներ | 41-5-1 | 278 |
| **2** | 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներ | 41-5-2 | 1115 |
| **3** | դատապարտյալներ | 41-5-3 | 634 |
| **4** | ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներ | 41-5-4 | 1560 |
| **5** | Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներ | 41-5-5 | 372 |
| **6** | Գործազուրկներ | 41-5-6 | 1966 |
| **7** | միայնակ բնակվող կենսաթոշակառուներ | 41-5-7 | 594 |
| **8** | առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք | 41-5-8 | 1 |
| **9** | Փախստականներ | 41-5-9 | 56 |

| | | | |
|---|---|---|---|
| **10** | Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացածներ | 41-5-10 | 2 |
| **11** | անվճարունակ այն ֆիզիկական անձինք, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում | 41-5-11 | 2018 |
| **12** | հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք | 41-5-12 | 160 |
| **13** | օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձինք | 41-5-13 | 1 |
| **14** | Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներ | 41-5-14 | 88 |
| **15** | խոշտանգումից տուժած անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով | 41-5-15 | 0 |
| **16** | «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում | 41-5-16 | 46 |

| | | | |
|---|---|---|---|
| | համերաշխության վերականգնման մասին» օրենքի համաձայն ընտանիքում բռնության ենթարկված անձինք | | |
| **17** | «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա հարուցված քաղաքացիական գործերով պատասխանողներ | 41-5-17 | 0 |
| **18** | անձինք, որոնց վերաբերյալ իրականացվում է անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու գործերի վարույթ | - | 732 |
| Ընդամենը՝ 9623 | | | |

**Ծանոթագրություն**. Մերժված դիմումների ընդհանուր թիվը՝ 39, որից

| N° | Մերժման պատճառը | Քանակը |
|---|---|---|
| **1** | չունի կարգավիճակ | 24 |
| **2** | ըստ 41-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի | 1 |
| **3** | ըստ 41-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի | 2 |
| **4** | իրավական հիմքերի բացակայությամբ | 1 |
| **5** | այլ | 11 |

**ՀՊԳ դիմած քաղաքացիների ընդհանուր թիվը 9662**
**այդ թվում՝**
**ՀՊԳ դիմած քաղաքացիների՝ բավարարված դիմումների թիվը՝ 9623**
**ՀՊԳ դիմած քաղաքացիների՝ մերժված դիմումների թիվը՝ 39**

2021թ. քաղաքացիների դիմումների քանակը՝ ըստ խնդրի բնույթի

| N° | Խնդրի բնորոշումը | Դիմումների թիվը |
|---|---|---|
| | **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ** | |
| **1** | ամուսնալուծության, ամուսնությունն անվավեր ճանաչելու կամ ամուսնությունը վերականգնելու | 304 |
| **2** | Այլ | 479 |
| **3** | անձի գործունակությունը սահմանափակելու, սահմանափակումը վերացնելու կամ հոգաբարձություն սահմանելու | 13 |
| **4** | անձին անգործունակ ճանաչելու, ճանաչումը վերացնելու կամ խնամակալություն սահմանելու | 1011 |
| **5** | անձին անհայտ բացակայող ճանաչելու կամ ճանաչումը վերացնելու | 613 |
| **6** | անձին մահացած ճանաչելու կամ ճանաչումը վերացնելու | 55 |
| **7** | անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու | 2 |
| **8** | աշխատանքային վեճի հետ կապված | 175 |
| **9** | ԱՊՊԱ-ի հետ կապված | 60 |

| | | |
|---|---|---|
| **10** | առողջությանը պատճառված վնասը հատուցելու | 9 |
| **11** | ավանդների հետ կապված | 5 |
| **12** | բաժնեմասն առանձնացնելու հետ կապված | 210 |
| **13** | բարոյական վնասը հատուցելու | 1 |
| **14** | բնակելի տարածության սեփականության և այլ իրավունքների հետ կապված | 546 |
| **15** | գործարքը կամ պայմանագիրն անվավեր կամ առոչինչ ճանաչելու | 75 |
| **16** | գումար բռնագանձելու | 550 |
| **17** | գույքահարկի կամ հարկային այլ պարտավորությունների հետ կապված | 11 |
| **18** | գույքային վեճի հետ կապված | 167 |
| **19** | գույքն արգելանքից հանելու | 25 |
| **20** | դատական ակտերի հարկադիր կատարման հետ կապված | 47 |
| **21** | ԵԿՄ անդամներին իրավաբանական օգնություն տրամադրելու | 1 |
| **22** | երեխայի համար ալիմենտ վճարելու, տեսակցության կարգ սահմանելու կամ բնակության վայր որոշելու | 719 |
| **23** | ընդհանուր օգտագործման տարածքի հետ կապված | 3 |
| **24** | ընտանիքի անդամի, ամուսինների կամ նախկին ամուսինների համար ալիմենտ վճարելու | 3 |
| **25** | ընտրական իրավունքի պաշտպանության հետ կապված | 1 |
| **26** | թոշակի, կենսաթոշակի կամ այլ սոց. վճարների հետ կապված | 110 |

| | | |
|---|---|---|
| **27** | ժառանգության հետ կապված | 254 |
| **28** | ինքնակամ կառույցի, դրա նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու | 18 |
| **29** | իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատելու | 107 |
| **30** | խնամակալություն, հոգեբարձություն կամ պատրոնաժ սահմանելու | 97 |
| **31** | կերակրողի մահվան հետևանքով վնաս կրած անձանց վնասը հատուցելու | 2 |
| **32** | կյանքին կամ առողջությանն սպառնացող վտանգը վերացնելու | 1 |
| **33** | կոմունալ վճարների հետ կապված | 2 |
| **34** | համատիրության հետ կապված | 6 |
| **35** | հայրությունը որոշելու, հայրությունը (մայրությունը) վիճարկելու կամ երեխայի սերումը մորից հաստատելու | 159 |
| **36** | հաշմանդամություն, հաշմանդամության խումբ սահմանելու կամ կենսաթոշակ հաշվարկելու | 14 |
| **37** | հեղինակային կամ հարակից իրավունքների հետ կապված | 1 |
| **38** | հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու | 25 |
| **39** | հոգեբուժական օգնության, հաշվառման կամ հաշվառումից հանելու | 11 |
| **40** | հողամասի կամ այլ անշարժ գույքի պետական գրանցման | 31 |
| **41** | հողամասի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ այլ իրավունքների հետ կապված | 94 |

| | | |
|---|---|---|
| **42** | հրապարակային սակարկությունների հետ կապված | 5 |
| **43** | ձեռքբերման վաղեմության ուժով սեփականություն ձեռք բերելու | 51 |
| **44** | ՃՈ ակտերը վիճարկելու | 4 |
| **45** | նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու, նոտարական այլ գործունեության հետ կապված | 1 |
| **46** | որդեգրելու, որդեգրումը վերացնելու կամ որդեգրման հետ կապված այլ հարցով | 5 |
| **47** | պայմանագիրն (գործարքը) անվավեր կամ առոչինչ ճանաչելու | 17 |
| **48** | պայմանագրային պարտավորությունների հետ կապված | 19 |
| **49** | պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության հետ կապված | 47 |
| **50** | սերվիտուտ սահմանելու | 6 |
| **51** | սեփականաշնորհման՝ հողամասի կամ այլ անշարժ գույքի | 16 |
| **52** | սեփականության իրավունքը ճանաչելու | 68 |
| **53** | սեփականության իրավունքը գրանցելու կամ գրանցումն անվավեր ճանաչելու | 47 |
| **54** | սեփականության կամ այլ իրավունքների խախտումները կամ խոչընդոտները վերացնելու | 127 |
| **55** | սնանկության հետ կապված | 376 |
| **56** | վարկերի, վարկային պարտավորությունների կամ բանկերի կամ վարկային կազմակերպությունների հետ կապված | 74 |

| | | |
|---|---|---|
| **57** | վարչական ակտը բողոքարկելու | 5 |
| **58** | վնասը հատուցելու հետ կապված | 178 |
| **59** | տեղեկատվություն ստանալու հետ կապված | 7 |
| **60** | փոխառության հետ կապված | 2 |
| **61** | քաղաքացիական կացության ակտերի գրանցամատյաններում գրառումների անճշտությունները պարզելու | 15 |
| **62** | վտարման պահանջի | 37 |
| **63** | ծնողական իրավունքների սահմանափակման, զրկելու, սահմանափակումը վերացնելու | 30 |
| **64** | (none) | 38 |
| **65** | բանկային պարտավորությունների | 79 |
| **66** | նվիրտվության հետ կապված | 3 |
| | **Ընդամենը՝** | 7274 |
| | **ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ** | |
| **1** | Այլ | 171 |
| **2** | աշխատանքային վեճի հետ կապված | 33 |
| **3** | ավանդների հետ կապված | 1 |
| **4** | բնակելի տարածության սեփականության և այլ իրավունքների հետ կապված | 44 |
| **5** | գործարքը կամ պայմանագիրն անվավեր կամ առոչինչ ճանաչելու | 8 |
| **6** | գումար բռնագանձելու | 12 |

| | | |
|---|---|---|
| **7** | գույքահարկի կամ հարկային այլ պարտավորությունների հետ կապված | 7 |
| **8** | գույքային վեճի հետ կապված | 18 |
| **9** | գույքն արգելանքից հանելու | 2 |
| **10** | դատական ակտերի հարկադիր կատարման հետ կապված | 34 |
| **11** | թոշակի, կենսաթոշակի կամ այլ սոց. վճարների հետ կապված | 100 |
| **12** | ինքնակամ կառույցի, դրա նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու | 2 |
| **13** | համատիրության հետ կապված | 1 |
| **14** | հաշմանդամություն, հաշմանդամության խումբ սահմանելու կամ կենսաթոշակ հաշվարկելու | 14 |
| **15** | հողամասի կամ այլ անշարժ գույքի պետական գրանցման | 3 |
| **16** | հողամասի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ այլ իրավունքների հետ կապված | 20 |
| **17** | ՃՈ ակտերը վիճարկելու | 7 |
| **18** | նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու, նոտարական այլ գործունեության հետ կապված | 7 |
| **19** | պայմանագրային պարտավորությունների հետ կապված | 2 |
| **20** | սեփականաշնորհման՝ հողամասի կամ այլ անշարժ գույքի | 1 |
| **21** | սեփականության իրավունքը ճանաչելու | 13 |

| | | |
|---|---|---|
| **22** | սեփականության իրավունքը գրանցելու կամ գրանցումն անվավեր ճանաչելու | 8 |
| **23** | սեփականության կամ այլ իրավունքների խախտումները կամ խոչընդոտները վերացնելու | 9 |
| **24** | վարչական ակտը բողոքարկելու | 122 |
| **25** | վնասը հատուցելու հետ կապված | 3 |
| **26** | քաղաքացիական կացության ակտերի գրանցամատյաններում գրառումների անճշտությունները պարզելու | 2 |
| **27** | ապաստանի հայցելու | 65 |
| **28** | (none) | 12 |
| **29** | զինծառայողների ապահովագրության հիմնադրամից հատուցում ստանալու հարցով | 2 |
| | **Ընդամենը՝** | 723 |
| | **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ** | |
| | **Ընդամենը՝** | 0 |
| | **ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ** | |
| **1** | քննիչի, դատախազի կամ հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները բողոքարկելու | 44 |
| **2** | նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը բողոքարկելու | 50 |
| **3** | քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը բողոքարկելու | 142 |
| **4** | վարչական հանձնաժողովի որոշումը բողոքարկելու | 3 |

| | | |
|---|---|---|
| **5** | անկախ հանձնաժողովի որոշումը բողոքարկելու | 5 |
| **6** | պատժից ազատելու, պատժի կատարումը հետաձգելու | 25 |
| **7** | պատժի կրումից պայմանական վաղակետ ազատելու կամ պատժի չկրած մասը ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու | 275 |
| **8** | դատական որոշման վերաբերյալ կասկածները և անհստակությունները լուծելու | 3 |
| **9** | դատական ակտերը կատարելու ընթացքում ծագած այլ հարցերը լուծելու | 10 |
| **10** | նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու | 16 |
| **11** | քրեական գործ հարուցելու | 65 |
| **12** | համաներում, ներում կիրառելու | 9 |
| **13** | Այլ | 662 |
| **14** | քրեական գործով ներկայացուցչություն ապահովելու | 278 |
| **15** | (none) | 35 |
| **16** | դեռևս չլրացված | 1 |
| | **Ընդամենը՝** | 1623 |
| Ընդամենը՝ | | 9620 |

2021թ. գրավոր խորհրդատվության եղանակով վարած գործերը

| N° | Խորհրդատվության տեսակը | Տրված հանձնարարությունների թիվը | ընդհանուր թիվը |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| 1 | իրավաբանական բնույթի փաստաթուղթ | 986 | 1018 |

| N° | Խորհրդատվության տեսակը | Տրված հանձնա-րարութ-յունների թիվը | ընդհա-նուր թիվը | ավարտ-ված (քննված) բողոք-ների և դիմումնե-րի թիվը | Բավա րար-վել է ամբող - ջությա մբ | Բավարա ր-վել է մասնակի | Բավարար-վել է՝ ընդամենը | մերժված և այլ բողոք-ների և դիմումնե -րի թիվը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հայցադիմում (դիմում)՝ ապահովելով հայցադիմումի (դիմումի)՝ վարույթ ընդունելը | 845 | 956 | 929 | 95 | 5 | 100 | 829 |
| 2 | վերաքննիչ բողոք | 192 | 216 | 205 | 10 | 1 | 11 | 194 |
| 3 | հայցադիմումի (դիմումի) պատասխան | 50 | 55 | 54 | 2 | 1 | 3 | 51 |
| 4 | հակընդդեմ հայց | 18 | 22 | 22 | 2 | 0 | 2 | 20 |
| 5 | առարկություն | 56 | 74 | 73 | 9 | 0 | 9 | 64 |
| 6 | հայցադիմումի լրացում | 37 | 42 | 42 | 5 | 1 | 6 | 36 |
| 7 | վերաքննիչ բողոքի պատասխան | 27 | 34 | 34 | 15 | 0 | 5 | 29 |
| 8 | վճռաբեկ բողոքի պատասխան | 8 | 8 | 8 | 0 | 0 | 0 | 8 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | միջանկյալ ակտի դեմ վերաքննիչ բողոք | 40 | 42 | 38 | 15 | 0 | 15 | 23 |
| 10 | միջանկյալ ակտի դեմ վերաքննիչ բողոքի պատասխան | 0 | 1 | 1 | 1 | 0 | 1 | 0 |
| 11 | միջանկյալ ակտի դեմ վճռաբեկ բողոք | 11 | 11 | 10 | 2 | 0 | 2 | 8 |
| 12 | միջանկյալ ակտի դեմ վճռաբեկ բողոքի պատասխան | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 13 | արտադատական կարգով դիմում-բողոք | 233 | 257 | 254 | 28 | 6 | 34 | 220 |
| 14 | արտադատական կարգով դիմում-բողոքի պատասխան | 6 | 6 | 6 | 0 | 0 | 0 | 6 |
| 15 | դատախազին ուղղված բողոք՝ քննիչի որոշումների (գործողությունների) դեմ | 40 | 41 | 39 | 3 | 1 | 4 | 35 |
| 16 | դատարանին ուղղված բողոք՝ քննիչի որոշումների (գործողությունների) դեմ | 3 | 4 | 4 | 1 | 0 | 1 | 3 |
| 17 | վերադաս դատախազին ուղղված բողոք՝ դատախազի որոշումների (գործողությունների) դեմ | 1 | 1 | 1 | 1 | 0 | 1 | 0 |
| 18 | դատարանին ուղղված բողոք՝ դատախազի որոշումների (գործողությունների) դեմ | 32 | 46 | 43 | 4 | 0 | 4 | 39 |
| 19 | սնանկության դիմում՝ ապահովելով դիմումի վարույթ ընդունելը | 21 | 21 | 21 | 14 | 0 | 14 | 7 |

| N° | Խորհրդատվության տեսակը | Տրված հանձնարարությունների թիվը | ընդհանուր թիվը | ավարտված (քննված) բողոքների և դիմումների թիվը | ընդունվել է վարույթ | բավարարվել է ամբողջությամբ | բավարարվել է մասնակի | բավարարվել է՝ ընդամենը | վարույթ չընդունված, մերժված և այլ բողոքների և դիմումների թիվը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | վճռաբեկ բողոք | 102 | 112 | 106 | 6 | 3 | 0 | 3 | 103 |
| 2 | ՍԴ դիմում | 1 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 1 |

Ծանոթագրություն.

1. Վարված գործերի քանակը՝ 2968

2. Մերժված դիմումների թիվը՝ 0

3. Դադարեցված դիմումների թիվը՝ 1

4. Տրված հանձնարարությունների ընդհանուր թիվը՝ 2709

Ընդամենը՝ 2968

**2021թ. քաղաքացիների դիմումների հիման վրա վարված գործերի քանակը**

| Ա. | Հաշվետու ժամանակաշրջանում վարած գործերի թիվը | թիվը |
|---|---|---|
| 1 | Հաշվետու ժամանակաշրջանում ներկայացուցչությունների թիվը | 2581 |
| | այդ թվում՝ | |
| 1.1 | քաղաքացիական գործերով ներկայացուցչությունների թիվը | 1796 |

| | | |
|---|---|---|
| 1.2 | վարչական գործերով ներկայացուցչությունների թիվը | 167 |
| 1.3 | սահմանադրական գործերով ներկայացուցչությունների թիվը | 0 |
| 1.4 | տուժողի և այլ քրեական գործերով ներկայացուցչությունների թիվը | 618 |
| 2 | Հաշվետու ժամանակաշրջանում խորհրդատվությունների թիվը | 8048 |
| | այդ թվում՝ | |
| 2.1 | Հաշվետու ժամանակաշրջանում տրամադրված գրավոր խորհրդատվությունների թիվը | 2710 |
| 2.2 | Նախորդ տարվանից մնացած գրավոր խորհրդատվությունների թիվը | 260 |
| 2.3 | Հաշվետու ժամանակաշրջանում բանավոր խորհրդատվությունների թիվը | 5078 |
| | **Ընդամենը** | **10629** |

| **Բ.** | **Առաջին ատյանի դատարանում վարած գործերի թիվը** | **քաղ.** | **վարչ.** | **ընդ.** |
|---|---|---|---|---|
| 1 | Առաջին ատյանի դատարանում ավարտված գործերի թիվը | 704 | 55 | 759 |
| 2 | Առաջին ատյանի դատարանում ընթացիկ գործերի թիվը | 593 | 37 | 630 |
| 3 | Առաջին ատյանի դատարանում հրաժարումների և փոխանցված գործերի թիվը | 421 | 38 | 459 |
| | **Ընդամենը** | **1718** | **130** | **1848** |
| 4 | Հօգուտ վստահորդի կայացված վճիռների թիվը | 508 | 25 | 533 |
| | այդ թվում՝ | | | |
| ա) | Ամբողջությամբ | 354 | 22 | 376 |
| բ) | Մասնակի | 154 | 3 | 157 |
| 4.1 | Հաշտության համաձայնության հիմքով ավարտված գործերի թիվը | 15 | 0 | 15 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4.2 | Հայցից հրաժարվելու հիմքով ավարտված գործերի թիվը | 25 | 2 | 27 |
| 5 | Ի վնաս վստահորդի կայացված և այլ դատական ակտերի թիվը | 194 | 30 | 224 |

| Գ. | Վերաքննիչ դատարանում գործերի թիվը | քաղ. | վարչ. | ընդ. |
|---|---|---|---|---|
| 1 | Վերաքննիչ դատարանում ավարտված գործերի թիվը | 60 | 17 | 77 |
| 2 | Վերաքննիչ դատարանում ընթացիկ գործերի թիվը | 8 | 10 | 18 |
| 3 | Վերաքննիչ դատարանում հրաժարումների և փոխանցված գործերի թիվը | 3 | 7 | 10 |
| | **Ընդամենը** | **71** | **34** | **105** |
| 4 | Հօգուտ վստահորդի բավարարված (մերժված) վերաքննիչ բողոքների թիվը | 22 | 9 | 31 |
| | այդ թվում՝ | | | |
| ա) | Ամբողջությամբ | 20 | 9 | 29 |
| բ) | Մասնակի | 2 | 0 | 2 |
| 4.1 | Հաշտության համաձայնության հիմքով ավարտված գործերի թիվը | 0 | 0 | 0 |
| 5 | Ի վնաս վստահորդի բավարարված (մերժված) բողոքների և այլ դատական ակտերի թիվը | 30 | 6 | 36 |

| Դ. | Վճռաբեկ դատարանում գործերի թիվը | քաղ. | վարչ. | ընդ. |
|---|---|---|---|---|
| 1 | Վճռաբեկ դատարանում ավարտված գործերի թիվը | 1 | 1 | 2 |
| 2 | Վճռաբեկ դատարանում ընթացիկ գործերի թիվը | 2 | 0 | 2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | Վճռաբեկ դատարանում հրաժարումների և փոխանցված գործերի թիվը | 2 | 0 | 2 |
| | **Ընդամենը** | **5** | **1** | **6** |
| 4 | Հօգուտ վստահորդի բավարարված (մերժված) վճռաբեկ բողոքների թիվը | 1 | 0 | 1 |
| | այդ թվում՝ | | | |
| ա) | Ամբողջությամբ | 1 | 0 | 1 |
| բ) | Մասնակի | 0 | 0 | 0 |
| 4.1 | Հաշտության համաձայնության հիմքով ավարտված գործերի թիվը | 0 | 0 | 0 |
| 5 | Ի վնաս վստահորդի մերժված (բավարարված) բողքների և այլ դատական ակտերի թիվը | 0 | 0 | 0 |

| **Ե.** | **Տուժողի և քրեական գործերով ներկայացուցչությունների թիվը** | **թիվը** |
|---|---|---|
| | այդ թվում՝ | |
| ա) | տուժողի գործերով ներկայացուցչությունների թիվը | 514 |
| բ) | այլ քրեական գործերի թիվը | 104 |
| 1 | Տուժողի և այլ քրեական գործերով ավարտված գործերի թիվը | 402 |
| 2 | Տուժողի և այլ քրեական գործերով ընթացիկ գործերի թիվը | 139 |
| 3 | Տուժողի և այլ քրեական գործերով հրաժարումների և փոխանցված գործերի թիվը | 77 |
| | **Ընդամենը** | **618** |

| **Զ.** | **Տուժողի և այլ ավարտված քրեական գործերով արձանագրված արդյունքները** | **թիվը** |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| այդ թվում՝ | | |
| ա) | դատարան ուղարկված գործերի թիվը | 18 |
| բ) | մեղադրական դատավճիռների թիվը | 26 |
| գ) | ամբողջությամբ բավարարված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը | 9 |
| դ) | մասով բավարարված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների թիվը | 2 |
| ե) | վերացված կարճումների թիվը | 12 |
| զ) | քրեական հետապնդում չիրականացնելու (դադարեցնելու) վերացումների թիվը | 2 |
| է) | նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու վերացումների թիվը | 5 |
| ը) | դատական որոշման կատարման հետ կապված՝ ամբողջությամբ բավարարված բողոքների թիվը | 7 |
| թ) | դատական որոշման կատարման հետ կապված՝ մասով բավարարված բողոքների թիվը | 0 |
| ժ) | արձանագրված այլ արդյունքների թիվը | 271 |
| | չնշված | 347 |
| ի) | տուժողի գործերով բավարարված քաղաքացիական հայցերի (վնասի հատուցումների) թիվը | 25 |
| լ) | Պատժից պայմանական ազատում | 33 |
| որից՝ | | |
| ա) | բավարարվել է ամբողջությամբ | 22 |
| բ) | բավարարվել է մասով | 3 |
| | **Ընդամենը** | **757** |

| Է. | Սահմանադրական դիմումներով գործերի թիվը | թիվը |
|---|---|---|
| 1 | ՍԴ կողմից վարույթ ընդունված դիմումների թիվը | 0 |
| 2 | Օրենքը հակասահմանադրական ճանաչելու վերաբերյալ որոշումների թիվը | 0 |
| 3 | Մերժված ՍԴ դիմումների թիվը | 0 |
| 4 | ՍԴ կողմից վարույթ չընդունված և այլ դիմումների թիվը | 2 |

| Ը. | Խորհրդատվություն | նախորդող ժամանակահատվածից | ընթացիկ ժամանակահատվածում | ընդ. |
|---|---|---|---|---|
| ա) Բանավոր խորհրդատվությունների թիվը՝ ըստ գործի տեսակների | | | | |
| | քաղաքացիական | | 3845 | 3845 |
| | վարչական | | 356 | 356 |
| | քրեական | | 877 | 877 |
| | սահմանադրական | | 0 | 0 |
| | չնշված | 0 | 0 | 0 |
| բ) Գրավոր խորհրդատվությունների թիվը՝ ըստ գործի տեսակների | | | | |
| | քաղաքացիական | 2171 | 204 | 2375 |
| | վարչական | 246 | 21 | 267 |
| | քրեական | 293 | 33 | 326 |
| | սահմանադրական | 0 | 2 | 2 |
| | չնշված | 0 | 0 | 0 |

Ծանոթություն.Հաշվետու ժամանակահատվածում.

| | |
|---|---|
| Բավարարված դիմումների թիվը | 10628 |
| Մերժված դիմումների թիվը | 0 |
| Դադարեցված որոշումների թիվը | 1 |
| Ընդամենը՝ | 10629 |